ԳԻՍՄԻ ԲԱՇԻՆՋԱՂԵԱՆ

75(Ա7 Ղ25)[Հ-Ղ]
Բ-Ղ

ՆԿԱՐՉԻ ԿԵԱՆՔԻՑ

(ՑԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ)

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1903

ՆԿԱՐՉԻ ԿԵԱՆՔԻՑ

(ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ) *)

I

Պետերբուրգի Գեղարուեստների Ակադեմիայի բոլոր ուսանողները սրտատրոփ սպասում են գարնան սկզբին։ Նրանցից ամեն մէկը անց է կացնում ձմեռը շատ ախուր։ Լինելով գլխաւորապէս հարաւային հեռու կամ մօտիկ տեղերից, կասկած չկայ, որ մայրաքաղաքի մութ ու խոնաւ օդը, մանաւանդ գեղեցիկ բնութեան բացակայութիւնը, ճնշում է նրանց սրտերը։ Շատ յաճախ լսում է նրանց բերանից, թէ արդեօք ե՞րբ պէտք է վերջանայ այս անպիտան ձմեռը, ե՞րբ կըտեսնենք լոյս... Ո՛հ, ի՞նչ հրաշալի բան է հարաւային արեգակը, կապոյտ երկինքը, դաշտերն ու բլուրները, սարերն ու ձորերը... Ընդհանրապէս հիւսիսային ձմեռը ձանձրացուցիչ է իւրաքանչիւր ուսանողի համար, բայց դա այնքան

*) Լոյս են տեսել «Մշակի» համարներում, կտոր-կտոր, միքանի տարուայ ընթացքում, 1888 թուից։

զգալի չի լինում պատմաբանների, ժանրիստների, բատալիստների և պորտրետիստների համար, որքան պէյզաժիստների—բնութեան հարազատ զաւակների համար, որոնց կեանքին է վերաբերում և մեր խօսքերը։ Գալիս է գարունը, վերջանում են քննութիւնները՝ աջող կամ անաջող. բայց այդ միևնոյն է. նրանց յոյսը մեծ է, նրանք հաւատում են իրանց տաղանդին։ Երջանի՜կ օրեր։ Բոլորեքեան շտապում են վերադառնալ հայրենիք, ուր արդէն ծաղկում է բնութիւնը։ Նրանց առաջին գործը լինում է ձեռք բերել նկարչական բոլոր պիտոյքները՝ ներկեր, վրձիններ, պաստառ, էտիւդարան (ճանապարհորդական արկղ), թուղթ, մատիտներ, հովանի և աթոռ։ Այդ բոլորը պատրաստելուց յետոյ ուղևորւում են հայրենիք։

Ես էլ այդպիսիներից էի։

1883 թ. մայիսի սկզբներին, վերջին հրաժեշտ տալով Պետերբուրգին, եռանդով և յոյսերով լի՝ վերադարձայ հայրենիքս—Սղնախ, ուր անց էի կացրել մանկութիւնս ու պատանեկութիւնս։ Ծնողներս այլևս չկային, տնից ու տեղից նոյնպէս զրկուել էի, բայց հայրենիքիս սէրը Ֆնացել էր իմ մէջ անխախտ...

Տեղ հասնելու պէս պատրաստեցի նկարչութեան

բոլոր գործիքներս՝ պաստառի փոքրիկ կտորների վրայ էտիւդներ և էսկիզներ նկարելու համար։ Արդէն միւս օրը լուսադէմին դիմում էի դէպի քաղաքի արևելեան ծայրը՝ Ալաղանի դաշտավայրը, նկարելու նպատակով։

Նկարիչները, չնայելով որ անդադար հետազոտում են բնութիւնը, ուսումնասիրում են նրա գաղտնի երևոյթներն ու գաղտնիքները, ստանում են տպաւորութիւններ, միևնոյն ժամանակ էսկիզներ ու էտիւդներ էլ են շինում, այսինքն բնութիւնից ճիշտ պօրտրէաններ են հանում։ Իսկ ձմեռը փակուած արհեստանոցներում, երևակայութեամբ պատկերացնում են իրանց առաջ այս կամ այն տեսարանը, լուսաւորութիւնը, մթնոլորտը և այլն, երբեմն էլ նայում են պատերի վրայ շարած էտիւդներին, նորոգում տպաւորությունները և այս բոլորից յետոյ արտայրում են պատկերներ...

*

Գարնանային առաւօտ է։ Սղնախից դուրս մի բարձրաւանդակի վրայ կանգնած՝ նայում եմ դէպի արևելք, ուր անհուն տարածութեան մէջ, Կովկասեան լեռնաշղթայի ետևից նկատելի է մի շերտաւոր

գունաւոր փայլ, որ հորիզոնից բարձր կիսաշրջան կազմելով, աստիճանաբար միախառնւում է հազիւ նշմարելի մանիշակագոյն երկնքի հետ։

«Արևը շուտով կրծադէր», մտածեցի ես։

Դաշտավայրն ընկղմուած է խոր քնի մէջ, ծածուած մոխրագոյն թանձր մառախուղով։ Դա յիշեցնում է ինձ ծովը. և իրաւ այնքան նման է ծովին, որ անծանօթը հեշտութեամբ կըսխալուի։ Երկինքը պարզ է և խաղաղ. բնութեան մէջ լռութիւն է տիրում։

Փայլը փոքր առ փոքր ընդարձակուելով երկնակամարի վրայ, ոսկեգոյնի է փոխուել։ Թռչունների երամը՝ սև գծի զանազան ձևեր ընդունելով, սլանում է ընդարձակ հովտի վրայով մերթ բարձրանում դէպի երկինք, մերթ իջնում ու խորասուզւում մշուշի մէջ։ Լեռների ձիւնապատ գագաթների քամակից փայլն արդէն անհետացել է և տեղի տուել բոցավառ արևին, որ ցոյց տալով դէմքը՝ սփռել է իր տակ ոսկեփայլ փոշի։ Բոլոր բարձրաւանդակները, ուր մերկ ժայռերի կամ կանաչազարդ լեռների վրայ դանւում են կիսաքանդ պարիսպներ, սրբավայրեր, հին աւերակներ ու գերեզմանատունը, ներկուել են զանազան կարմրախառն գոյներով։ Թէպէտ մառախուղը դեռ ևս թանձր է և անշարժ, սակայն

Նրա միջից այստեղ ու այնտեղ հսկայական ընկուզենիներն ու բարդիները խրոխտ կերպով դուրս են ցցել իրանց մոյգ կանաչագոյն գագաթները՝ կարծես արևածագը տեսնելու համար։ Արեգակը գանդաղութեամբ բարձրանալով, գունատւում և հետզհետէ փոքրանում է, տալով երկնքին պարզ կապուտակ երանգ։ Ոսկեփայլ փոշին այժմ արծաթի է փոխւում և ընդարձակւում լեռան ստորոտներում։ Մառախուղը արթնանում-շարժւում է համեստութեամբ և գոլորշիանալով դիմում է դէպի երկինք՝ անշտապ և անվրդով։ Նա հասնում է լուսատուին ու թափանցիկ քօղով ծածկում նրա դէմքը՝ քնքոյշ ստուեր ձգելով երկրի վրայ։ Ցեսարանն աւելի կախարդիչ ու խորհրդաւոր է դառնում։ Լռութիւնը շարունակւում է։ Լուսատուն երկար չի համբերում քօղի տակ, երբեմն ցոյց է տալիս իր դէմքը, մի վայրկեան պայծառացնում է բնութեան հրաշալիքը և դարձեալ ծածկւում քօղի տակ։ Մշուշը ջերմութիւն զգալով շարունակում է բարձրանալ, արագացնելով քայլերը, իսկ երկնքի կապուտակի վրայ գոյանում են բարակ-ճերմակ ամպեր։ Ծովն այլևս չկայ։ Դաշտավայրն իր անվերջ տարածութեամբ փռուած է առաջս, որի սահմանը լեռնաշղթան է և որի երկու ծայրերը հեռանալով միախառնւում են օդի հետ ու կորցնում

իրանց ձևն ու գոյնը և այդպիսով անտեսանելի դառնում։

«Բաւական է» մրմնջում եմ ես, «արանից աւելի ընդարձակ տեսարան չէ կարող լինել և ցանկալի էլ չէ»։ Այն բարձրաւանդակի ստորոտում, որտեղ կանգնած եմ ես, երևում են շինական աղքատիկ խրճիթներ, թաղուած փարթամ բուսականութեան մէջ։ Մի քանի տեղից ծուխ է բարձրանում։ Գիւղերի և այգիների սահմանները վերջանում են ալիքաձև գծերով, իսկ դաշտը, զարդարուած քառանկիւնի գոյնզգոյն անթիւ գորգերով, շարունակւում է ու անհետանում հեռուում, ուր անխռով և հեզանազ հոսում է Կպազանը ոլոր-մոլոր պտոյտներով։ Այս գեղը միմեանցից բաժանում է բնութեան երկու տարբեր գեղեցկութիւնները — հարթ դաշտավայրը ծիսաւորի խիտ անտառից։ Հովտի վրայ փռուած երփներանգ գորգերի հետ ներդաշնակում են անձրևներից գոյացած ճահիճները, որոնց մէջ երկինքը ցոյց է տուել իր դէմքը, իսկ մի քանի տեղ նրանք բոցավառում են արևի ճառագայթների անպրադառնալուց։ Ծառերի և թփերի մանր ու խոշոր՝ ցիրուցան արած խմբերը լրացնում են տեսարանի շքեղութիւնը։ Ծիսաւորի անտառը գտնուելով դաշտի միևնոյն մակերևոյթի վրայ՝ տարածւում է մինչև Կով-

կասեան լեռնաշղթայի ստորոտները։ Այս աննկարագրելի հեռաւորութեան մէջ մեծաքանակ օդի ծալքերը խլել են ամբողջ տեսարանից յատուկ գոյները, պարզևելով նրանց փոխարէն թանձր կապոյտ քօղ։ Կուսական սրբութիւնն ու վսեմութիւնը տիրում է ամէն տեղ։ Արեգակը շարունակում է բարձրանալ, աստիճանաբար տաքացնելով օդը և կարճացնելով ծառերից ընկած ստուերները։

Բնութեան այս վեհութիւնը կաշկանդել է ինձ, անձնաւորութիւնս սաստիկ աննշան է թւում իմ աչքին։

«Որքա՜ն չնչին արարած է մարդս» արտասանում եմ հազիւ լսելի ձայնով...

*

Ես գնացել էի արևածագը նկարելու նպատակով, բայց բնութեան հրաշալիքը այն աստիճան ազդեց ինձ վրայ, որ ամէն բան մոռացայ։ Իմ կեանքում միևնոյն բանը կրկնուել է յաճախ և կրկնւում է այժմ էլ։ Նախապատրաստուած գնում եմ որոշած կողմը էտիւդ նկարելու, բայց երբ հասնում եմ ցանկացած տեղը, երբ իմ առաջ բացւում է սքանչելի տեսարանը, ես այլևս անկարող եմ լինում վրձին շարժելու, նայում եմ ապշած և չեմ կշտանում...

Վերջապես վերադառնում եմ տուն դադարկ ձեռքով...

Առհասարակ կարծում են, թէ այն պատկերները, որ նկարիչները դնում են ի ցոյց հասարակութեան, նկարուած են հէնց այն օրը, նոյն իսկ այն ժամում, ինչ օրը կամ ինչ ժամը որ ներկայացնում է պատկերը։ Այդ կարծիքը սխալ է։ Ընդհակառակն՝ երբ նկարիչը գտնուում է բնութեան գրկում, ուր անվերջ գեղեցիկ տեսարաններ և զմայլեցուցիչ մոմենտներ են նրան շրջապատում, այն ժամանակ նա անզօր է գտնուում բնութիւնից որևէ կտոր ընդօրինակելու։ Բայց միևնոյն նկարիչը, երբ կորցնում է աչքի առջևից այդ ամենը, երբ հասնում է ձմեռը և ոչնչացնում բնութեան զարդարանքները և երբ նա՝ փակուած իւր արհեստանոցում, հրճուանքով յիշում-մտաբերում է իւր տեսածները, որոնց այլևս չէ կարողանում տեսնել, այն ժամանակ միայն նա դիմում է վրձինի օգնութեան և աշխատում արտայայտել իւր սրտի ցանկութիւնները։

Հէնց այդ տեսակ պայմանների մէջ նկարուած պատկերներն են լինում մտքի, զգացմունքների և բուռն ոգևորութեան ծնունդ և միմիայն այդ տեսակ գործերը կարող են տպաւորութիւն գործել նայողի վրայ...

«Վերջապէս մի բան պէտք է նկարել», մտածեցի ես և քայլերս ուղղեցի դէպի ոչ-հեռու գտնուող այգիները։ Նրանցից մէկի դուռը բաց էր. մտայ, շրջեցի. ոչ ոք չկար, այդպիսի չէր երևում։ Այգու մէջտեղը, մի փոքրիկ հրապարակի վրայ, ուր գիշերուան ցօղով ծածկուած թարմ խոտերն ու գոյնզգոյն ծաղիկները թեքել էին իրանց մանրիկ գլխները, կանգնած էր յարդով ծածկուած մի խրճիթ։ Նրա «ֆասադը» ներկայացնում էր փայտի երկու կոպիտ սիւն, էլ ուրիշ ոչինչ, այնպէս որ խրճիթի մէջ եղած բոլոր իրերը դրսից պարզ երևում էին։ Այնտեղ կար ջրի կուժ՝ բերանը ծառի տերևներով խցած, մի դատարկ քեղան, որից սխտորի հոտ էր գալիս, էժանագին, հին կապերտի մի կտոր. առաստաղից կախուած էր հացով լի պայուսակը, պղնձէ կաթսան և մի հին եափնջի։ Խրճիթին կից բարձրանում էր մի ահագին ընկուզենի, որ իրանից աւելի ահագին ստուեր էր արձակել խրճիթի և նրան շրջապատող մի որոշ տարածութեան վրայ։ Արևի ճառագայթները տեղ-տեղ թափանցելով ծառի ճիւղերի միջով, փայլուն, զանազան գծերով ու կէտերով տատանւում էին մաքուր բուսականութեան վրայ։ Խրճթի սիւներից մէկի վրայ նոյնպէս շարժւում էին երկու իրար նման յուսաւոր կէտեր։ Ծառը իր

գնդաձև գաղաթով՝ սաստիկ կանաչ գոյներով նկարուած էր երկնքի պարզ կապոյտ ֆոնի վրայ։

«Ահա, բնութեան այս անշուք կտորը կընկարեմ», վճռեցի ես և նստեցի խրճթի դիմաց մի փռած ու թաց կոճղի վրայ։ Սկսեցի նկարել։ Անցաւ մի ժամ։ Էտիւդս բաւական աջող էր գուրս գալիս և ես շտապում էի շուտով աւարտել, որովհետև լոյսերն ու ստուերները փոխւում էին, իսկ ինձ հարկաւոր էր մօտենան ըմբռնել...

Ցանկարծ աչքիս ընկաւ այդպեսանը, որ բահը ուսին գրած, կամացուկ քայլերով մօտենում էր խրճիթին։ Նա ինձ չտեսաւ, մտաւ ներս, բահը դրեց մի անկիւնում, շլինքը քորեց, յետոյ նստեց կապերտի կտորի վրայ և ձախ ոտքի թաց տրեխն ուղղելով՝ ինչ որ փնթփնթաց, կարծեմ հայհոյական մի բան ասաց։ Այդ միջոցին նայեց իմ կողմը և ծնաց ապշած։

— Բարի լոյս, ասացի ես վրացերէն։

— Աստուծոյ բարին քեզ, պատասխանեց նա, տեղից կամաց վեր կենալով և գլխարկը շարժելով։

Նա միջահասակ, նիհար, մօտ 40 տարեկան վրացի էր, սուր քթով և ահագին, խիստ կոշտ ձեռքերով։

Նա անշարժ կանգնեց դիմացս, այնպէս որ խանգարում էր ինձ նկարելու։

— Խնդրեմ քիչ այս կողմը գաս։

Կարծես նա ակամայ շարժուեց տեղիցը և քայլերն ուղղեց դէպի ինձ։

— Ի՞նչ ես գրում, խաղէյն. հարցրեց նա։

— Ֆո խրճիթն եմ նկարում. ե՛կ տես։

Նա մօտեցաւ, կողքիս կանգնեց, յետոյ կամաց-կամաց կռանալով քիթը հասարակ բոլորովին մօտեցրեց էտիւդին, սակայն ոչինչ չհասկացաւ։

— Այդպէս չի կարելի, մի քիչ հեռու կանգնի՛ր, այն ժամանակ բան կըհասկանաս։

Նա ինձ լսեց, կանգնեց երկու քայլ հեռու և սկսեց դիտել։ Յետոյ յուռռումունչ հեռացաւ այն տեղից, գնաց խրճիթի կողմը... և մի փոքր յետոյ, չգիտեմ ինչ տեղից, դուրս քաշեց մի ահագին դաղանակ և իր տեղում կանգնելով՝ գոռաց. «Վե՛ր կաց այստեղից, ապա թէ ոչ...»։

— Ի՞նչ պատահեց քեզ, այ մարդ,—զարմանալով հարցրի ես.—այդպէ՞ս ես ընդունում հիւրին։ Դու ինձ դո՞ւրս ես անում այստեղից, թոյլ չե՞ս տալիս, որ աւարտեմ գործս։ Լաւ, ես կըգնամ, բայց քեզ ցոյց կըտամ...

Իմ խօսելու միջոցին նա կատաղած՝ շարունակ սպառնալից խօսքեր էր ուղղում ինձ, ստէպ-ստէպ ցոյց տալով դաղանակի գլուխը։

Վրդովուած վեր կացայ տեղիցս, հաւաքեցի վրձիններս, փակեցի էտիւդարանս ու շտապաւ դուրս գալով այդուց՝ աւելացրի.

— Այս վարմունքը էժան չի նստիլ քեզ։

— Լաւ մարդը երբէք չի գայ այստեղ և քանդուած խրճիթը վեր գրի... Եթէ դու լաւ մարդ ես, գնա, Շ-ի ու Ս-ի տունը վեր գրի... Ես գիտեմ, որ քեզ պէս մարդիկ միշտ խեղճերի և անօգնականների վրայ են յարձակւում... Գնա գանգատ տուր, «Հայրաթ» ես էլ մի պատասխան կրգոնեմ տալու...

Լսելով այդ խօսքերը, ես չգիտէի՝ ծիծաղե՞մ, վրդովուե՞մ, թէ՞ ցաւեմ։ Թէ ի՞նչն էր այդ տեսակ կոպիտ վարմունքի պատճառը, հաստատ չեմ կարող ասել, բայց ենթադրում եմ, որ նա ինձ ընդունեց որևէ պաշտօնեայի տեղ, կարծելով թէ գնացել եմ նրա այդին ու խրճիթը վեր գրելու։

Դրանով վերջացաւ իմ նկարչական ճանապարհորդութեան առաջին օրը։



II

Սղնախից երեսուն վերստ հեռաւորութեամբ, Սլազանի գաշտավայրի վրայ գտնւում է «Ղարաղալ» անուանուած մի փոքրիկ տեղ. դա մի սիրուն այգի է, աւելի սիրուն անտառին կից, շրջապատուած վարելահողերով։ Այնտեղ սպասում էր ինձ մանկութեանս ընկեր՝ երիտասարդ կալուածատէրը։ Օրն արդէն տաքացել էր. ժամը 10-ն էր, երբ ճանապարհ ընկայ։ Քաջ գիտենալով ձիուս դանդաղ ու անշնորհք լինելը, վճռեցի ոտով իջնել ապառաժների վրայով մինչև ստորոտը, որովհետև սայլի ճանապարհն անհամեմատ երկար է։ Մի ժամից յետոյ յոգնած ու ջարդուած, շորերս երկու տեղից պատռուած՝ հասայ ստորոտը, ուր մի աղբիւրի մօտ հաւաքուել էին վրաց գիւղի կիսամերկ փոքր երեխաներ, որոնք աղմուկ բարձրացնելով քարեր էին արձակում ծառերի վրայ և ամեն անգամ մի վայրի խակ տանձ ընկնելիս՝ կռւում էին իրար հետ։ Քիչ ջուր խմեցի և նստեցի աղբիւրի մօտ հանգստանալու։

Մանուկներն ընդհատեցին աղմուկը և մի բոպէ իրար հետ քչփչալուց յետոյ, նրանցից մէկը, երևի ամենից քաջը, յետ-յետ գնալով հարցրեց ինձ.

«Ես էն ռուսի խաբ» (դու ռուս ես)։

— Հայ եմ, պատասխանեցի ես։ Յետոյ դրպանիցս այ՛բսմ հանեցի և սկսեցի գծագրել ոչ-հեռու գտնուող գիւղական փայտաշէն տնակներու Բոլոր երեխաները մի ակնթարթում հաւաքուեցին շուրջս և միմեանց բոթբոթելով արգելում էին ինձ գծագրելու։ Այդ չարաճճիներից ազատուելու համար հարկաւոր էր խորամանկութեան դիմել. հանեցի տաս կոպեկանոց արծաթէ մի դրամ և տալով նրանցից մէկին, պատուիրեցի որ իրանց մէջ հաւասար բաժանեն։ Ինձ լաւ յայտնի էր, որ գիւղական երեխայի ձեռքին երբէք մի կոպէկ անգամ չի լինում, ուստի արծաթէ դրամը նրանց բոլորովին պիտի շլացնէր։ Եւ իրաւ, ստանալուն պէս, առանց ժամանակ կորցնելու, նրանք վազ տուին դէպի գիւղ։

Ուրուագիծն աւարտելուց յետոյ, ձի նստեցի և երեկոյեան ժամը 4-ին հասայ Ղարաղաչ։ Հիւրընկալ ընկերս նախ և առաջ ինձ նախատեց ուշանալուս համար, յետոյ յայտնեց, որ երեք ժամ է սեղանը պատրաստ է և ինքը քաղցած ինձ է սպասում։

Ճաշելուց յետոյ ընկերս պառկեց քնելու, իսկ ես գուշակելով, որ նոյն օրուայ վերջալոյսը պեղեցիկ պէտք է լինի, դուրս եկայ դաշտ։ Թէպէտ յոգնած

էի և հանգստանալու կարիք էի զգում, սակայն անկարող եղայ սենեակում մնալ և արևի մայր-մտնելը չտեսնել։ Իմ կարծիքով բնության զանազան երևույթները, մանավանդ վերջալույսը, հետաքրքրելի են ամեն մի մարդու համար։ Շատ անգամ պէյզաժիստները քաղաքից դուրս են գնում, սարերն են բարձրանում և սպասում արևի մայր-մտնելուն, քանի որ նրանց քաջ յայտնի է, թէ այսօրուայ մօտ մէնան այլևս չի կրկնուելու։ Եւ իրաւ. ես մինչև այսօր չեմ տեսած երկու անգամ ճիշտ իրար նման արշալույս կամ վերջալույս։

*

Թանար թաղուհու ամրոցը դիմաց է։

Ցունիս ամիսն է։ Արևագակը՝ ամբողջ օրը երկիրն այրելուց յետոյ մայր է մտնում։ Կանաչախառն կապոյտ երկնքի վրայ տարածուած են բաց վարդագոյն ամպի կտորները։ Նրանք ամեն մի վայրկեան կերպարանափոխուելով, զանազան ֆանտաստիկական ձևեր ընդունելով՝ լուռ ու անձայն արշաւում են հիւսիսից դէպի հարաւ։ Նրանցից երբեմն պոկւում է մի փոքրիկ ամպիկ, առանձնանում, նօսրանում, նուազում է և միքանի շարժում գործելուց յետոյ անյայտանում երկնքի կապուտակութեան մէջ։

Շիկացած արևը սաղալով հորիզոնական ամպերի միջով՝ կրակ է տարածում իր շուրջը։ Նրա տակ գտնուող մերկ ապառաժները կորցրել են իրանց վայրենի դէմքերը. նրանք ինձ զօրաւոր չեն թուում։ Նրանք զուգուել են ոսկեհիւս ղեսատով, մեղմացել ու քնքշացել։ Նրանցից մէկը, որ գերազանց է իր վսեմութեամբ ու վայրենութեամբ՝ անջատուած իր գրացիներից, հսկայական հատակով բազմած է անառառապատ բարձրաւանդակի վրայ։ Նրա՝ մինչև ամպեր հասած գագաթը նման չէ սովորական ապառաժներին։ Այդ տարօրինակ գագաթը նման է հինաւուրց աւերակների մնացորդներին։ Արևը ուղղակի նրա վրայ է տարածել իր կիզիչ ճառագայթները, ուրեմն և արգելում է ինձ որոշելու խորհրդաւոր գագաթը։ Ամբողջ ապառաժը իր յաղթանդամ մարմնով այս բոպէին ներկայացնում է մի թափանցիկ սիլուէտ, էլ ուրիշ ոչինչ։ Հատած արտերը, կանաչ բլուրները, որոնք միշտ բնութեան զարդ են համարուում, այժմ չեն գրաւում իմ ուշադրութիւնը. նրանց գեղեցկութիւնն ու փայլը նանմացել են մայր-մտնող արեգակի առաջ։ Ամենայն ինչ խաւար է թուում։

Ահա հրեղէն լուսատուն մօտեցաւ ժայռի մի անկիւնին, շիկացրեց նրան, այրեց, ոչնչացրեց և թաղնուեց նրա ետևում։ Ապառաժը մռայլուեց

ու սև գոյներով նկարուեց աչք շլացնող ոսկեգոծ երկնքի վրայ՝ երկայն սառներ արձակելով դէպի ինձ։

Ինձ հետաքրքրում է մռայլ հսկան, ուստի ապասում եմ արևի բոլորովին անյայտանալուն։ Երկինքը աստիճանաբար մգանում է, բոլոր բարձրաւանդակները դրկուում են ծիրանի գոգեստից, ամպերը ծանրանում են և կորցնում իրանց թափանցկութիւնը։ Նրանց մէջ տարածուում են գունատ, իրար նման երկայն ճառագայթներ, յետոյ նրանք սկսում են փոքր առ փոքր թուլանալ... Դարձեալ մի բոպէ և նրանք այլևս չկան։

Սառներները նոյնպէս անյայտացան, սիրուէտը պարզուեց, դաշտը կարծես հանգստութիւն առաց, փչեց թեթև զեփիւռը և արտերի մէջ քնքուշ շարժում տիրեց. նրանք արձակեցին մի ախորժալուր սրսրուոց։

Ահա արդէն երևացին Թամար Թագուհու ամրոցի աւերակները։ Բազմագարեան ապառաժը՝ իր անմատչելի գագաթի վրայ սրբութեամբ պահում է մինչև այսօր այդ աւերակների ճեացորդները։ Նրանք իրանց բարձրութիւնից ահարկու դէմքով դիտում են չորս կողմը և կարծես ոչ մի արարած չէ յանդգնում վրդովել իրանց հանգստութիւնը։ Այդ հսկան իր կրծքից ժայռի անթիւ կտորներ է պոկել ու

գլորել դաշտի չորս կողմը՝ մահ տարածելով խիտ բուսականության մեջ։ Այնտեղ, մի անկիւնում, բեկորների ու մացառների խառնուրդի միջից բղխում է մի փոքրիկ աղբիւր։ Զուլեենալով կանոնաւոր ճանապարհ, տարածել է իր աննշան ճիւղերը ամեն կողմ։ Ապառաժը իր մէջ հարիւրաւոր ճեղքեր է բացել, որոնցից դուրս են ցայտել հազարաւոր ծառեր ու թփեր, գրկախառնուած իրար հետ, ծռմռուած և կլսիվայր կախուած։ Բայց գագաթը ճնշուած չէ, ազատ է ամեն բանից. նա ինձ թւում է մի գերբնական ոյժ, որի առաջ փայլակն ու կայծակն անգամ անզօր են։

Նա արդէն սկսում է ընկղմուել խաւարի մէջ, ծածկուել է անթափանցելի քողով։ Բուսականութիւնը սեւանում է, երկինքն ընդունում է սառն, մուգ-կապոյտ գոյն, աստղերը մէկը միւսի յետևից յայտնւում են ու թոյլ կերպով փայլում։ Հողմը սաստկանում է, սայլի ճանապարհից թեթև փոշի է բարձրանում, դաշտի միջից ծաղիկների հոտ է բուրում և ապառաժը՝ թամար թագուհու ամրոցի հետ փոխւում է մի սև, տափակ ու ահռելի զանգուածի։

— Վաղը՝ դեռ արև չծագած, կը գծագրեմ արբսմիս մէջ այսօրուայ բոլոր տեսածներս, մտածեցի ես ու վերադարձայ տուն, ուր ընկերս սպասում էր ինձ։

III

Սլբոմիս մեջ մտցնելով բնութեան զանազան տեսարաններ՝ հասայ Ցարսկիէ-Կօլօդցի, կամ ինչպէս ժողովուրդն է անուանում՝ Թուքուրմիշա ռուսական գիւղը, որ գտնւում է Թամաբ Թագուհու ամամրոցից հինգ վերստ հեռու դէպի հիւսիս։ Հասնելուս պէս հին բարեկամներիցս մէկը խորհուրդ տուաւ, նոյնիսկ խնդրեց, որ անպատճառ նկարեմ այդտեղի ժողովրդի մէջ յայտնի Քիռոյի կերպարանքը։ Թէպէտ մարդկանց դէմքեր նկարելն առհասարակ չեմ սիրում, բայց և այնպէս մի ամբողջ խումբ երիտասարդներին զուարճութիւնից չզրկելու համար, վճռեցի նկարել հռչակուած Քիռոյի դէմքը։

Մի քանի ժամից յետոյ Քիռօն կանգնած էր առջևս։ Նա ձախ աչքը ծածկելով և բերանը ծռմռելով՝ շարունակ քորում էր դլուխը և յիմար ժպիտը երեսին նստում էր ինձ։ Նա մօտ քսանհեօթ տարեկան երիտասարդ վրացի էր, նիհար, հիւանդոտ կազմուածքով։ Թէպէտ նրա արտաքին տեսքը ակամայից ծիծաղ էր շարժում, սակայն միևնոյն ժամանակ առանց խղճալու չէի կարողանում նայել թշուառ արարածին. նա խելագար էր։

—Կուզե՞ս պատկերդ նկարեմ, հարցրի վրացերէն։

Նա գլուխը շարժելով և ծիծաղելով համաձայնութեան նշան տուաւ։

—Եթէ քառորդ ժամ հանգիստ նստես, ես քեզ քսան կոպէկ կը տամ, ասացի։

Նա նայում էր դէպի ցած։

—Քսան կոպէկ կը տամ, կրկնեցի նորից։

—«Էրթի տաքանից արադի» (մի բաժակ էլ օղի), վերջապէս պատասխանեց նա։

Այս պատասխանին յաջորդեց երիտասարդների կողմից բարձրաձայն ծիծաղ։ Մի բաժակ օղին իսկոյն և եթ խմացրի և խոստացայ մի բաժակ էլ նստելուց յետոյ տալ։

Մաքսատիկ նստեց և ամբողջ քառորդ ժամ արձանի նման անշարժ մնաց։ Երիտասարդները մօտս հաւաքուած, անհամբեր սպասում էին վերջացնելուս։ Նրանք լուռ էին, միայն երբեմն-երբեմն փրթիկացնում էին, տեսնելով նմանութեան նշանները։

Նկարն աւարտուեց, Քիտոն իր քսան կոպէկը և մի բաժակ օղին ստացաւ, ապա երիտասարդներին յիշոցներ ուղղելով, գնաց անհետացաւ...

Միւս օրը առաւօտ վաղ անկողնիս մէջ լսեցի փողոցից դժգոհութեան ձայներ, սպառնալիք, յիշոցներ և վերջապէս մեր բնակարանի թխթխկոցը։ Հիւրընկալ բարեկամս դուրս գնաց տեղեկանա-

լու, թէ ո՞վ է, կամ ի՞նչ է ուզում։ Նա վերադարձաւ ծիծաղից թուլացած. միքանի անգամ փորձեց պատմել, բայց իւրաքանչիւր անգամ ձայնը խեղդւում էր կոկորդի մէջ։

— Ի՞նչ է պատահել, դուռը ծեծողն ո՞վ է, զարմացած հարցրի ես։

Ցիշոցները շարունակւում էին. ես ճանաչեցի Քիտոյի ձայնը։

Գաղտնիքը պարզուեց։ Երիտասարդները Քիտոյին հաւատացրել էին, որ իբր թէ նրա պատկերը ես նկարել եմ իշխանութեան ներկայացնելու նպատակով։ Եթէ իշխանութիւնը հաւանի, անմիջապէս Քիտոյին զինուոր կը տանեն, եթէ չհաւանի, հրացան կ՚արձակեն պատկերի վրայ և Քիտոն այստեղ կը մեռնի։

Ուրեմն դժուար չէ հասկանալ, որ յիշոցները իմ հասցէին էին ուղղած։ Հաղիւ հազ ինձ աջողուեց համոզել Քիտոյին, որ երիտասարդները հանաք են արել։

*

Նոյն երեկոյեան նստած ծանօթներիս հետ թէյ էինք խմում, երբ նաւթագործարանի մշակներից բաղկացած մի ահագին խումբ եկաւ և կանգ-

նեց մեր սենեակի բաց դռան առաջ։ Երևում էր, որ նոր էին դուրս եկել գործարանից, որովհետև ամբողջովին սևացած էին։ Նրանց մեջ կային հայ, վրացի և մասամբ ռուս մշակներ։

—Ի՞նչ էք ուզում, դիմեցի նրանց։

Իմ հարցին յաջորդեց մի անտանելի խառնակութիւն։ Ամենքն սկսեցին միասին խօսել, մատնացոյց անելով մշակներից մէկին։ Երբ խնդրեցի, որ նրանցից միայն մէկը խօսի, մի առողջակազմ ջահել առաջ եկաւ, բեղերն ուղղեց ու սկսեց.

—Այս տղան մի շաբաթ առաջ քսան մանէթ կորցրեց, գողացան, բայց չգիտենք ո՞վ է գողացել։ Հիմա մենք խնդրում ենք քեզ, որ կարարադինը բաց անես ու իմանաս թէ մեր միջից ո՞վ է գողացողը։

Ես մնացի շուարած. ծանօթներս նոյնպէս լսեցին իրանց ուշադրութիւնը։

—Ես կարարադին բաց անող չեմ, պատասխանեցի։

—Հապա ո՞վ է։

—Չգիտեմ։

—Գիտենք որ դու ես, փող ենք տալիս, ձրի խօ չենք ուզում։ Ախար երկու օր է մենք տանջում ենք, որ շրջում ես ամբողջ գիւղը և որտեղ էլ նրս-

ում ես, ժողովուրդը հաւաքւում է, դու էլ նրանց համար կարաբաղին ես բաց անում։ Եթէ սխալուած ենք, ների՛ր։

Բարեկամներիցս մէկը հասկանալով բանի էութիւնը, իսկոյն վազեց-բերաւ էտիւդարանա, բաց արաւ և ցոյց տալով նրանց զոյնզգոյն նկարները, հարցրեց.

—Ո՞ր գոյնի վրայ էք ուզում, որ նա բաց անէ։

—Իր կամքն է, մենք ի՞նչ գիտենք, պատասխանեցին ամենքը միասին։

Նրանց միամտութեան վրայ բաւական ծիծաղելուց յետոյ բացատրեցի, որ ես կարաբաղին բաց անող չեմ, այլ նկարիչ... Իրանց գէմքերի վրայ զժգոհութիւն արտայայտելով գնացին—հեռացան։

IV.

Սևանայ լիճը, որի մասին շատ էի լսել, բայց չէի տեսել, վճռեցի անպատճառ տեսնել և որքան կարելի էր շուտ։ Երջեցի Վրաստանի և Դաղստանի զանազան տեղերը, բաւականաչափ նիւթեր հաւաքեցի և վերջապէս ճանապարհ ընկայ դէպի Սևան։

Աղստաֆայից սկսած բնութիւնը շատ գեղեցիկ է։ Դիլիջանի ձորը հիացրեց ինձ։ Ռազմավիրական ճանապարհը, որ սովորաբար նմանեցնում են յիշեալ ձորին, նոյնպէս հիանալի է, բայց ես մի առանձին նմանութիւն չեմ գտնում այդ երկու գեղագրական տեսարանների միջև։ Երկուսն էլ վսեմ են, երկուսն էլ դեռ ևս կուսական դրութեան մէջ. ինժենէրների յանդուգն ձեռքը դեռ չէ աւերել նրանց գեղեցկութիւնը, ինչպէս աւերել է Եվէյցարիայի աննման բնութիւնը։ Կովկասեան սարերի ճանապարհը համեմատում եմ առողջակազմ և յաղթանդամ լեռնրցու հետ, որի հայեացքը և՛ գրաւիչ է, և՛ սարսափեցնող. իսկ Դիլիջանի ձորը նման է գիւղական խրճիթում ծնուած ու սնուած և կուսական անտառների մէջ մեծացած մատղահաս գեղեցկուհու, որի կրակոտ

աչերը արտայայտում են անվեհերությունն, բնական պարզությունն և անմեղությունն։ Սակայն այդ երկու հրաշալիքների մասին կբխօսեմ մի ուրիշ անգամ, պատմական կղզին տեսնելուց յետոյ։

*

Սևանայ լիճը փռուած է առջևս։ Աշնան երեկոյ է. մութը նոր է ընկել։ Արևմտեան կողմը, հորիզոնի մօտ՝ երկնքի վրայ դեռ ևս երևում են վերջալոյսի թոյլ, կարմրագոյն հետքերը։ Շուրջս մռայլ է և անշարժ։ Լիճը, ծովի կերպարանքով՝ ննջում է։ Մուգ-կապոյտ երկինքը, որի իսկական գոյնը կարելի չէ արտայայտել բառերով, ճշտութեամբ անդրադարձել է ջրի մէջ։ Ծովակը այս բոպէին ներկայացնում է մի ահագին անձեռագործ հայելի, որի մէջ՝ երկինքն իր միքանի հատիկ խոշոր աստղերով և մերկ, բուսականութիւնից զուրկ բլուրներն ու ապառաժները տեսնում են իրանց դէմքերը։ Կղզին, հայ հոգևորականութեան այս հինաւուրց աքսորատեղին՝ իր խորհրդաւոր կերպարանքով դուրս է ցցուել ծովի յատակի միջից և պառկել ջրի մակերեւոյթի վրայ՝ իր ուսերի վրայ պահելով հսկայական հին ճարտարապետութեան յիշատակները։ Երկրից ան-

ջատուած, բայց ջրերով շրջապատուած մռայլ հսկան մեծ տպաւորութիւն է գործում մարդու վրայ։ Ցամաքաբերդ հայ գիւղը՝ իր գետնափոր տնակներով և եգիպտական բրգաձև աթաբների կոյտերով բազմած է ծովակի ափին և դիտում է կղզին։ Ամեն տեղ տիրում է անդորրութիւն, միայն երբեմն լսւում է գիւղի կողմից պառաւ շան անախորժ հաչոցը և երբեմն էլ հասնում է տկանչիս ամենախուլ կերպով զանգուլակների աններդաշնակ բութ ձայնը. երևի ուղտի կարաւան է գալիս։

Կանգնած եմ ծովափեայ բարձրաւանդակի վրայ և անհամբերութեամբ սպասում եմ լուսնի ծագելուն։ Այո՛, լուսնի ծագելուն, բնութեան հրաշալիքների մէջ իմ ամենասիրելի վայրկեանին, որ շատ անգամ է փարատել սրտիս թախիծը։ Լիճը, երեք կողմից շրջապատուած քարափներով, պատռել է չորրորդ կողմը և փռուել տչքով անհասանելի տարածութեան վրայ, ուր աղօտ կերպով նշմարւում են լեռների փէշերը, որոնց շարունակութիւնը կորչում է ջրի, երկնքի և երեկոյեան մշուշի մէջ...

Վերջալոյսի հետքը այլևս չկայ։ Երկինքն ու երկիրն աստիճանաբար խաւարում են, իսկ աստղերը բազմանում են ու պայծառանում։ Նրանցից շատերը ժպտում են, շարժւում և ֆոսֆորի փայլ են

արձակում իրանց միջից, իսկ միւսները անշարժ համբերութեամբ նայում են դէպի ցած, մեղքերով լի երկրի վրայ։ Զանգուլակների միահնչիւն, մեղամաղձոտ ձայնը փոքր առ փոքր մօտենում է. լսւում է նոյնպէս ուղտապանի երգի ազդու ձայնը, արևելեան զգայուն եղանակը—բայեաթին։ Գիւղի տնակների մէջ, մէկը միւսի եաևից յայտնւում են գիւղական անպաճոյճ ճրագները և պարզ որոշելով փոքրիկ պատուհանների ձևերը հաղիւ ճառագայթում են գուրս։ Ահա կզզու վրայ երևաց մի ճրագ. նա տատանւում է, հանգչում, նորից վառւում, պայծառանում, նուազում է և վերջապէս բոլորովին անյայտանում։

Տափարակ գագաթով բլուրի եաևը երկինքը փոքր ինչ շառագունւում է։

«Վերջապէս մօտեցել է լուսնի ծագումը», ուրախալի միտքն է անցնում ղլխովս։ Ամպի միքանի կտորները ներկւում են կարմրախառն մուգ-դեղին գոյներով, որոնք անսիսմիս արտացոլում են անշարժ ջրի մէջ։ Երկիրն էլ, որի երեսը շարունակ ծածկուած է սև քօղով, ինձ նման սպասում է լուսնին, իր գիշերային պահապանին։

Շարունակ նայում եմ երկնքի շառագունուած մասին, որ փոքր առ փոքր ընդարձակւում է երկնակամարի վրայ և ամօթխած լուսնի մերձենալն է գու-

շակում աշխարհին։ Բլուրներից մինը այս միջոցին հրաբուղխ է թվում ինձ, գագաթի վրայ կրակ է նշմարւում, նա մեծանում է, աճում, բարձրանում և իր հրաշէկ, բայց համեստ դէմքն ամբողջապէս դարձնում է դէպի երկիր և գիշերային ողջոյն ուղարկում։ Նայում է իր շուրջը և ամէն տեղ աղօտ լոյս է սփռում, նայում է դէպի վայր և իր պատկերն է տեսնում։ Շարունակում է բարձրանալ, սակայն նկատելով որ աշխարհիս շնչաւոր թէ անշունչ բոլոր էակները իր կողմն են ուղղել իրանց հայեացքը, մօտենում է երկնային քօղին և դեռահաս պարկեշտ կոյսի նման ծածկւում նրա տակ մի բոպէ, բայց՝ ղրդուած հետաքրքրութիւնից, երբեմն-երբեմն բարձրացնում է իր բոլորակ դէմքից քօղի մի անկիւնը, նայում է վայր, դարձեալ տեսնում անձեռագործ հայելիի մէջ իր երեսը և արագութեամբ նորից մրտնում քօղի տակ։ Այս միջոցին միտս է ընկնում վշտահար բանաստեղծի խօսքերը.

Թագնուի՛ր, ո՛վ լուսին, մթան սիրահար,
Դէմքդ սև քօղով թո՛ղ ծածկեն ամպեր.
Մի՛ լուսաւորիր դու այսքան պայծառ
Այս դաշտն ու հովիտ, այս խորունկ ձորեր.
Օ՜ն, աչքէս հեռի...

Բնութեան այս վայրկեանը հրապուրիչ է և մելամաղձական...

Անցնում է ժամանակ. եղանակը փոխվում է. բարձրանում է հողմը և բնութեան այս սրբազան անպորրութիւնը խանգարւում։ «Մթան սիրահարի» դէմքից պոկւում է քողը և մի կողմը շպրտւում։ Նա կարծես կերպարանափոխուել է, քնքշացել, մաքրուել և արծաթապատել իրան։ Հողմը փչում է ծովակի վրայ և յանկարծակի հարուած տալիս։ Նա քաղցր քնից արթնանալով, դեռ կամաց շարժւում է տեղից, յետոյ խուլ հառաչում, ընկնում այս ու այն կողմը և կատաղաբար փրփուրներ արձակում կրծքի միջից։ Շրուշրուոցով մօտենում է ժայռերին, դարձեալ յետ քաշւում, նորից մօտենում, բարձրանում և գանդուրներով զարդարուած ճակատով մարտնչում նրանց հետ։ Ճակատամարտն անընդհատ շարունակւում է. ալիքներն անթիւ անգամ ջարդուփշուր եղած յետ են վազում։ Նրանց կատաղութիւնը սաստկանում է։ Հազարաւոր ալիքներ՝ իրանց գլուխը բարձրացրած՝ խումբ խմբի ետևից մռնչալով նորից յարձակւում են՝ ցանկանալով պատառել իրանց ճնշող ժայռի կուրծքը, ուստի ճիգ են թափում, բայց զգալով հսկայի անվեհերութիւնը, յետ են քաշւում ամօթոտ։ Իսկ ժայռն իր թրջած փէշերով նայում է բարձրութիւ-

նից ներոգամտարար և ժպտում նրանց անմտության վրայ։ Լուանի դէմքը, որ մի ժամ առաջ պայծառ երևում էր անշարժ ջրի մէջ, այժմ բիւրաւոր մանր կտորների է փոխուել և իր փշրանքները տարածել ծովակի մի որոշ մակերևոյթի վրայ։ Ալիքները չեն կարողանում հանգիստ դտնել, նրանք բարձրանում են, իջնում, ճնշում իրար և դարձեալ յիշելով անհրաժեշտ պատերազմը, ձեռք ձեռքի տուած մօտենում են ժայռին, հաւաքում իրանց ամբողջ ոյժը, փքվում, ուռչում, բայց իզուր, անպաղթ հսկայի ոտների տակ միշտ յաղթուած են հանդիսանում։ Լուսինը տեսնելով ծովի կատաղութիւնը, ատելիանարար բարձրանում է երկնակամարի վրայ աղմուկ չլսելու համար։ Նրան շրջապատել են մաքուր ամպերը, ինչպէս ընկերուհիները հարսնացուին, և իրանց մէջ բոլորաձև ծիածան կազմելով փայփայում են նրան։ Երկինքը թափանցիկ է և սև, ուստի լուսնեակն իր արծաթեայ կայծերով աւելի պայծառ է նկատւում խաւար ֆոնի վրայ, ինչպէս գեղեցկուհին սգազգեստի միջից։

Գեղամայ կղզին մռայլ ու դաժան կերպարանքով ննջում է ջրի վրայ։ Մէջ լուանի գրաւիչ դէմքը, ո՛չ աստղերի ժպիտը և ոչ էլ ալեկոծուած ծովի աղաղակը չեն ազդում նրա վրայ։ Վանքերի գմբէթ-

ները՝ իրանց խաչակիր գագաթներով սև գոյներով նկարուածներն ծովակի լուսաւորուած մասի վրայ։ Լճի զայրացած ալիքները, շրջապատուած կղզու չորս կողմը, երբեմն աղերսանքով գիմում են նրա օգնութեան, երբեմն սպառնալիքներ են ուղղում. բայց՝ «քար է նրա սիրտը և խիղճը մեռած». նա անգթութեամբ յետ է մղում նրանց։ Ցուսահատուած յետ են դառնում և հանդիպելով ընկերներին, գրկախառնւում են իրար և ընդհանուր ոյժերով ապաղակ բարձրացնում, գլուխ գլխի են դարկում և փրփուրը մինչև երկինք բարձրացնում. բայց, աւաղ, երկինքն էլ է խուլ և համար...

Ահա՛ երևաց ալիքների վրայ առաջատաւոր մի նաւակ. նա կարծես միևնոյն ուղը ասատանուելով, անշան սաղեղի նման երբեմն բարձրանում է, երբեմն իջնում ցած.—արդեօք ո՞ր տեղից և ո՞ւր է գնում։

Քամին շարունակվում է և ծովակի կատաղութիւնն աւելի սասակացնում։

Ինձ դուր չէ գալիս բնութեան խռովութիւնը. նա չի հիացնում, այլ միայն վրդովում է մարդուս հոգին...



V

1883 թ. ապրիլ ամսի 22-ն էր, երբ Վլադիկավկազից առաւօտեան գուրս եկայ երկաթի լծած սայլակով գէպի Թիֆլիզ։

Միայնակ լինելու պատճառը մի վէճ էր, որ տեղի ունեցաւ յիշեալ քաղաքում իմ և մի բժիշկ ուսանողի միջև, որի հետ Պետերբուրգից մինչև այդտեղ միասին էինք եկել և պէտք է խոստովանուեմ, որ շատ համակրելի ճանապարհորդակից էր։ Վէճի առիթն եղաւ մի անմեղ բան։ Խօսակցութիւնը սկսուեց նրանով, որ ես՝ յափշտակուած, անդադար կրկնում էի՝ «վերջապէս միակերպ տափարակ բնութիւնից ազատուեցինք և շուտով տեսնելու ենք հրաշալի Դարիալի ձորը»։ Իսկ նա, որ բոլոր ժամանակ «այո» և «ըհը»-ով էր համաձայնում հետս, վերջին անգամ, երբի (այժմ նոյնիսկ համոզուած եմ) համբերութիւնից գուրս գալով և իրան կորցնելով, մանաւանդ որ սաստիկ յոգնած ու ջարդուած էր, պատասխանեց կոպտաբար և այդ բոլորի պատճառն այն եղաւ, որ նա նկարիչների և նախշքարների միջև մի առանձին զանազանութիւն չդտաւ։ Իսկ ես վերին աստիճանի վիրաւորուած՝ առանց երկար մտա-

ծելու պատասխանեցի՝ «Ուրեմն եթէ այդ տեսակէտից նայելու լինենք, կը դառնանք, որ բժիշկների և դասարանների միջև էլ մի առանձին զանազանութիւն չկայ։

Մեր վէճը տեղի ունեցաւ Վլադիկավկազի փօստային ընդհանուր հիւրասենեակում, ուր մի անկիւնում սեղանի մօտ նստած ընթրում էր Թիֆլիզեցի մեղ անծանօթ մի երիտասարդ գինեվաճառ, որ նոյնպէս միւս օրը մեկնելու էր դէպի Հայրենիք։ Նա, բատ երևոյթին, մեր խօսակցութեամբ ու վիճաբանութեամբ ո՛չ հետաքրքրւում էր և ոչ էլ հասկանում բանի էութիւնը. բայց ո՛րքան մեծ եղաւ իմ զարմանքը, երբ մեր յոգնելուց ու լռելուց յետոյ, անսպասելի կերպով, «լօթի» Թիֆլիզեցիներին յատուկ զուարճախօսութեամբ արտասանեց՝ «զօխտուրն էլ է լաւ, էն մէկէն էլ է լաւ, իմ արիւ, ձիր արիւ. ի՞նչ խիստ էք չարանում, լա՛ւ մարդիկ»։

Այդ փոքրիկ կատակը այնպիսի կոմիկական ձայնով ասուեց ու այնպիսի ազդեցութիւն ունեցաւ վրաս, որ չնայած իմ վրդոված սրտին՝ ծիծաղս հաղիւ խեղդեցի կոկորդիս մէջ։ Իսկ բժիշկը մի ակընթարթում վեր թռաւ տեղից ու վազեց միւս սենեակը, կարծեմ նոյնպէս ծիծաղը թագցնելու համար։

*

Վլադիկավկազից դուրս գալով, միքանի ժամից յետոյ արդէն գտնւում եմ Դարիալի ձորի մէջ։ Օդը մռայլ է, խոնաւ և ցուրտ։ Աջ կողմ ապառաժներ, ձախ կողմ ապառաժներ, վերջապէս շուրջս ապառաժներ, որոնցից մէկի սառոտով գնում եմ և շարունակ նայում վեր, բարձր, որտեղից կիսաքանդ կամարների ձեւով գլխիվայր կախուել են ահագին ժայռեր։ Նրանք նայում են ցած և սարսափ ներշնչում ինձ։ Եթէ մի կտոր, թէկուզ մի չնչին մասը պոկուի իր տեղից՝ ինձ սայլակիս հետ միասին փոշի՛ի հետ կը հաւասարեցնէ։ Ինուֆիանը մտադիր չէ եղել այստեղ ճանապարհ բանալու, բայց յանդուգն մարդը ինչ՞ը չի արել։

Ընթանում եմ դէպի առաջ և բարձր։ Մեր ուղին սկսում է ժայռերի սառի փէշերից և զարմանալի պատկերներով բարձրանում դրանց կրծքի վրայով ու դիմում ձիւնապատ գագաթների կողմը, որոնք այս միջոցին ծածկուել են սպիտակ և մոխրագոյն ամպերով, այն երկնային սաւանով, որի միջից երբեմն-երբեմն դուրս են ցայտում հատիկ-հատիկ մշտականաչ եղևնիներն ու մայրերը և զարձեալ անհետանում։ Ապառաժներն անընդհատ միմեանց են յաջորդում։ Նրանք բազմաթիւ և բազմաձև ծալքերով ձգում են անդնդային մռայլ ձորի միջով և միա-

խառնվում անթափանց թանձր կապուտակի հետ, ուր վարագուրված է գարնան քնքուշ երկնակամարը։ Ամեն տեղ տիրում է խլացուցիչ աղմուկ, որ յարմար կերպով ներդաշնակում է վայրենի բնութեանը։ Այս աղմուկը, գոռում-գոչումը կատաղի թերէքին է պատկանում։ Դա գլխիվայր վազելով քարքարոտ յատակի վրայից և ամեն ինչ քարուքանդ անելով, անխնայ շպրտում է այս ու այն կողմ ժայռերի միջից պոկած ահագին բեկորներ։ Դա նման չէ սովրական արագահոս գետերին, դա կատաղի է և իր կատաղութիւնը հասցրել է գագաթնակէտին։ Կորցրել է իր գոյնը, կորցրել է բոլորովին իրան։ Հազարաւոր պոռոյտներ անելով քարի է դարկվում, ամեն ինչ գրչում, արմատախիլ անում, ջարդում ու փշրում։ Երջապատում է կղզիացած ամրապինդ ժայռերին և անէծք ու ապառնալիք ուղղում՝ «ընչին արարած, եթէ ոչ այսօր, գոնէ վաղը անշուշտ կը պոկեմ տեղից, կը դարկեմ ափիդ և փշրելով կ'ոչնչացնեմ քո գոյութիւնը»։ Եռումէ ամբողջապէս, բլուրներ ու անդունդներ կազմում, նորից շուռ է գալիս և ջրնջում ու իր հետ տանում։ Այստեղ ծափ է տալիս, այնտեղ ապտակում-ծեծում, երբոբդ տեղ խփում գլուխը գետնին և մի ակնթարթում թռչկոտում բարձր, շատ բարձր՝ թուքեր արձակելով ամեն կողմ։

Նա անգութ է՝ գոռող և հպարտ։ Չի ուզում ջրի նմանուել, ամբողջապէս փրփուրի է փոխուել։ Մանր ու խոշոր սիրուն առուակներ ամեն մի քայլափոխում ծնունդ են առնում ժայռերի կրծքի միջից, կարկաչելով ուրախ-ուրախ վազում են ներքև, ձորի մէջ կատարուող աղմկալից տեսարանը տեսնելու, բայց անողորմ հրէշը կլանում, խեղդամահ է անում այդ ծաղկահասակ անմեղ արարածներին։

*

Ընթանում եմ զարձեալ դէպի առաջ և բարձր։ Ճանապարհը՝ իր անթիւ պտոյտներով դիմում է գագաթների կողմը. նա ոլորուելով՝ ապառաժների վրայ ատաթիճանաբար նուազում է, իսկ բարձր ամպերի մօտ մոխրագոյն թելի է նմանում և վերջապէս անյայտանում։ Ճանապարհի վրայ, միքանի հեռու տեղեր շարժական կէտեր են նշմարւում. նրանք անշուշտ մարդիկ՝ լեռնբոյիք են իրանց բեռնակիր ապրանքներով, կամ հարուստ քաղաքացիք՝ շքեղ կառքերի մէջ բազմած։ «Ահա՛ որտեղ է երևում մարդու ոգեւորութիւնը բնութեան դէմ», ակամայ անցնում է մտքովս։ Այս տեսարանը յիշեցնում է ինձ շատ անգամ տեսածս մրցիւնների արշաւանքը դարե-

ւոր կաղնիների և ընկուզենիների վրայ։ Մտաբերում եմ այս միջոցին մարդկային հանճարի զանազան վսեմ արտադրութիւնները՝ կոթողներ, տաճարներ, ամրոցներ, մոքով տեղափոխում եմ նրանց այստեղ, համեմատում բնութեան այս ահարկու ստեղծագործութիւնների հետ և հիասթափւում։ Ահա նրշմարում են հեռաւորութեան մէջ սպիտակ բծեր, որոնք կամաց-կամաց աճում են։ Փոքր առ փոքր մօտենում ենք նրանց. դա «Կաղբէկ» կայարանն է։

*

Անցնում է քսան րոպէ, ես դարձեալ շարունակում եմ ճանապարհս։ Ժամը երկուսն է։ Զարադուժ սև-սև ամպերն իրանց դաժան դէմքերով անշտապ սողում են երկնքի վրայով և շփուելով բուսազուրկ լեռներին՝ տալիս-անցնում են։ Կապուտակ երկինքն ամբողջապէս քօղարկուած է. միայն երբեմն - երբեմն դուրս են ցայտում արեգակի նուազ ճառագայթները, բոպէապէս շամանդաղ են տարածում ձորի այս ու այն տեղի վրայ և արագութեամբ իսկոյն չքանում։

—Փոթորի՞կ է լինելու, հարցնում եմ ձիավարին։

— Այո՛, պատասխանում է անհանգստութեամբ ու թափ տալիս գլուխը։

Ամպերը հեռզհետէ թանձրանում, իջնում են

աստիճանաբար դէպի երկիր, ձորը լցւում է աղջամուղջով, խաւարում է ամէն ինչ և օդի մէջ տիրում է մի առանձին հոտ, որ յիշեցնում է ծովային խոնաւութիւն։ Բարձրից նայում եմ ցածը, դէպի անդունդ, ուր Թերէքը շարունակ ընթանում է իր գոռում-գոչումով, բայց այս գոռում-գոչումը այս անգամ սիրտ ճնշող ողբի է նմանում, որով կարծես բնութեան խռովութիւնն ու արհաւիրքն է դուշակում։ Լեռնցիները սայլերը կանգնացրել են ճանապարհի ապահով անկիւնում, նեցուկներ են տուել անիւներին և պատրաստւում են սայլերի տակ մտնելու։ Ստէպ—ստէպ սլանում են մօտովս վախեցած թռչունները և շտապում իրանց բները։

Իմ ձիավարը մերթ խրախուսում է իր ձիերին, մերթ սպառնում, ստիպում է ամէն կերպ իրանց քայլերն արագացնել։ Խելացի անասունները կարծես նոյնպէս զգում են անխուսափելի վտանգը։ Նրանք ամենայն հաւատարմութեամբ աշխատում են, ճիգ են թափում շուտով տեղ հասնելու, բայց այս անողորմ զառիվայրը ուժասպառ է անում նրանց։

Ցանկարծ հրեղէն փայլը մի ակնթարթում փռւում է բնութեան մէջ ու հանգչում, նրան յաջորդում է մի խուլ ու հեռաւոր որոտում և դարձեալ լռում է ամէն ինչ։ Միմիայն ներքև, ձորի մէջ թե-

բէքը շարունակում է իր ողբը։ Դա այլևս կատաղի գազան չէ, այժմ արտասուքից աղաղակներ է արձակում։ Փայլակը նորից դուրս է պրծնում ամպերի միջից, միքանի կրակոտ ցնցումներ է գործում ու դարձեալ տեղի տալիս խաւարին. դրան հետևում է որոտումն և անձրևի խոշոր կաթիլները ուժգին զարկում են գետնին, որի վրայ դրոշմում են սև կէտեր։

Ահռելի ժայռեր, անդնդային ձոր, անողորմ գետ, դժոխային ամպեր, տարօրինակ խաւար — այս բոլորը կարծես դաշն են կապել իրար հետ խաղ խաղալու, բոլորովին ընկատելով իրանց գրկում սրբտանեղված կենդանի արարածների գոյութիւնը։ Նորից հրեղէն շանթեր, նորից սարսափելի ճայթումն։ Դղրդում է երկիրն ու արձագանքը միքանի անգամ կրկնւում է խառնաշփոթ ձորերի մէջ։ Անձրևն սկսում է առատութեամբ թափուել լեռնային յատուկ շխշխոցով և միախառնւում է արդէն ձորի խորքերում անհետացած թերէքի ձայնին։ Այս վայրենի համերգը շարունակւում է։ Երբեմն ընդհատւում է ամպերի որոտումից, երբեմն խանգարւում ձիավարի անբաւական ձայնից, բայց դարձեալ շարունակւում։

— Չէ՞ որ առաջարկեցին ձեզ մի-երկու ժամ սպասել կայարանում, նկատեց ինձ ձիավարը. երևի ձեզ հաճելի է այսպիսի բաներ։

— Դու հանգի՛ստ կաց, ինչ լինելու է թող լինի, ես չեմ վախենում։

— Երևում է, որ դուք դեռ ես չէք տեսել այստեղի «զաւալները»... «Նո՜ւռ, Վանկա», եղաւ պատասխան, զգուշութեամբ մատակելով ձիուն։

Ես նստած եմ սայլակի մէջ անշարժ, կռացած և աչքերս կիսաբաց, որովհետև անձրևի ուժեղ շիթերը թեք ուղղութեամբ ուղղակի երեսիս են զարկում։ Աչք եմ դարձնում աջ կողմ և տեսնում որ ժայռի միջից ամեն մի քայլափոխում քարեր են պոկւում ու գլորւում ցածը, բայց բարեբաղդաբար ոչ շատ խոշոր։ Փայլակ, կայծակ, որոտումն անդադար յաջորդում են միմեանց և կարծես սպառնում են կործանել աշխարհը և երկինք ու երկիր իրար խառնել։

*

Ճանապարհը շարունակ բարձրանում է։ Անձրևի կաթիլներն զգալի կերպով մանրանում են ու բազմանում։ Ես փոքր առ փոքր ընկղմւումեմ թուխ գոլորշու մէջ, որ աստիճանաբար թանձրանում է։ Դարձեալ քառորդ ժամ և ես պատած եմ կատարեալ խաւարով. բայց սա գիշերային խաւար չէ, այլ լեռնային մի մօմենտ, որին անկարող եմ համեմատել մի այլ բանի հետ՝ միտքս պարզելու, ցան-

կացածս արտայայտելու համար։ Այլևս բան չեմ տեսնում, նոյնիսկ ձիաները միրաժի նման աղօտ կերպով են նշմարւում։

Զգում եմ, թէ ինչպէս մի տեսակ թաց փոշի է մաղւում երեսիս։ Գոռում-գոչումը, աղաղակն ու ճայթիւնը դարձեալ շարունակւում են, սակայն, օ՜ դարմանք, այս բոլորը կարծես ներքև, ստորերկրեայ աշխարհումն է կատարւում։ «Գուցէ ամպերի մէջ եմ դտնւում», անցնում է մտքովս։ Երբեմն մօտիկից են ականջիս հասնում մարդկանց ձայներ ու անիւների ճռչիւնը։ «Քաշվի՛ր աջ կողմ», լսելի է լինում ձիավարիս միակերպ ձայնը։

Ցանկարծ ցնցւում է մեր սայլակն ու կանգ առնում։

—Խո՞ւլ ես, որ չես լսում «քաշվի՛ր» բառը՝ սանրն... աւելացրեց ձիավարս Ղազանի թաթարի բարբառով, մտրակի հարուածը հասցնելով մէկին։ Նա էլ փոխադարձ միքանի յիշոցներ ուղղեց սրա հասցէին օսերէն, միևնոյն ժամանակ աշխատելով ազատել իր երկանիւ սայլը։ Անցնում է դարձեալ քառորդ ժամ և այլևս անձրևի նշոյլն անգամ չի նկատւում, բայց զգում եմ թէ ինչպէս կրկին թրջւում եմ։ Օդը ցուրտ է և վերին աստիճանի խոնաւ։ Հագուստս սաստիկ ծանրացել է, ուսերս, մէջքս ցաւում են։

*

Խաւարն անհետացել է։ Արևի մեղմ ճառագայթները թափանցումեն նօսր մառախուղի միջով ու ախորժելի ջերմութիւն պարգևում բնութեան։ Ահա լեռների գագաթները. ահա նորից հսկայական ապառաժները. օրքան արցունքներ են թափում նրանք, բայց այդ ուրախութեան արցունքներ են։ Բնութիւնն սկսում է ժպտալ։ Թերէքն անգամ, որ անյայտացել է անտառների մէջ, այս միջոցին պարելով ու ծիծաղելով է մեզ յիշեցնում իր գոյութիւնը։ Ահա երևում են լեռների գագաթներին կպած ինչ-որ կէտեր, որոնք նման են ծիծեռնակների բներին. այնտեղ անշուշտ մարդիկ են ապրում։ Թռչունները ուրախ-ուրախ սլանում են մաքուր օդի մէջ զանազան ուղղութեամբ։ Ձիաները նոյնպէս աշխոյժ ու զուարթութիւն են ստացել։ Ճանապարհի վրայ անձրևից գոյացած ջրերը պլպլում են արևի ճառագայթների տակ։ Ո՞րքան գուրեկան է շունչ առնել այս մաքուր օդի մէջ. ո՞րքան ախորժելի է այս բոպէն։ Այլևս չեմ ցանկանում յետ նայել, ուր անդունդների մէջ դարձեալ շարունակւում է հոգեմաշ տեսարանը։ Մօտեցել ենք Կօրի կայարանին. դա հեռուից փայլում է սպիտակ գոյներով։

Ո՞րքան ուրախ եմ, որ շուտով հանգիստ եմ առնելու այնտեղ։

VI

Քանի անգամ դրիչ եմ վերցրել՝ Աբրահամեան դաշտավայրի մասին մի քանի խօսք գրելու նպատակով, այն է՝ արտայայտելու այն ապաւորութիւնը, որ ստացել եմ սրանից եօթ տարի առաջ, երբ առաջին անգամ գնացի այն կողմերը։ Այնուհետև ուրիշ անգամ ևս առիթ եմ ունեցել այցելել հին աշխարհը, բայց այն առաջուայ գրաւիչ ու քաղցր ապաւորութիւնն այլևս չի կրկնուել։ Ի՞նչ է պատճառը — դժուար է ասել։ Ինձ ուրեմն մնում է հաղորդել իմ անցեալ ապաւորութիւնից մնացած յիշողութիւնները։

«Մի փոքրիկ ամանով ջուր բեր այնտեղից ինձ համար, հարկաւոր է ինձ», անդադար խնդրում էր ամենամօտիկ ընկերներից մէկը, երբ ես Թիֆլիզում պատրաստւում էի մեկնելու դէպի Մասիսի շրջակայքը։ Խօսք տուի կատարել նրա այդ տարօրինակ ցանկութիւնը և ճանապարհուեցի մի ուսանող ընկերիս հետ, որ նոյնպէս ցանկութիւն ունէր ինձ նման ճանապարհորդելու։

*

Ամբողջ ութ օր Ս. Էջմիածնում մնալուց և այնտեղի յուլիս ամսուայ հուլակուած մոծակների ճանկերում տանջուելուց յետոյ շարունակեցինք մեր ուղին

դէպի Արարատի լանջերը, ուր փռուած են հայկական բաղմաթիւ գիւղեր։ Մոռացայ ասելու, որ Ս. Էջմիածնում ութ օր շարունակ քնում էինք Ղազարապատի կառուցի վրայ, որտեղից յոյս ունէի լուսադէմին, արշալոյսի միջոցին, Արարատի գագաթը տեսնելու, բայց դժբաղդաբար ապարդիւն անցաւ յոյսս։ Բոլոր ժամանակ ծածկուած էր թուխ ամպերով. կարծես վճռած էր չարժանացնել մեզ իր տեսութեանը։ Սրա փոխարէն ես էլ, ընկերս էլ իւրաքանչիւր առաւօտ մեր էինք կենում մի-մի նշաններով, որ մոծակները չէին զլանում դրոշմել մեր դէմքերին։ Ցիշում եմ, ինչպէս մի օր առանց ծիծաղի անկարելի էր լինում նայել ընկերիս դէմքին։ Նրա ձախ աչքն ուռել էր և բոլորովին ծածկուել, իսկ շրթունքների աջ անկիւնը ծռուել էր ծիծաղաշարժ կերպով։ Հայելու մէջ իրան տեսնելուն պէս՝ փակուեց սենեակում և որոշեց ամբողջ օրը դուրս չգալ։ Նրա ճակատին մի անապատելի տխրութիւն էր նկատուում. երևի այն պատճառով, որ դրա նախընթաց օրը մտադրուել էր այցելել դրատունն ու թանգարանը, իսկ այդ տեսակ այլակերպութիւնը թոյլ չէր տալիս նրան տանից դուրս գալու։ Նա խոյս էր տալիս մարդկանց հանդիպելուց, ինչպէս մի օրիորդ։

*

Մոդնու Ս. Գէորգ մենաստանը գտնուում է Սրագածի ստորոտում մի բարձրաւանդակի վրայ։ Արևը արդէն վաղուց մայր էր մտել և խաւարը տիրել էր ամեն տեղ, երբ ընկերներիս հետ միասին յոգնած ու ջարդուած հասանք այդ սրբավայրը։ Խաւար ամայութեան մէջ, խաւար ֆօնի վրայ նկարուում էր աւերի խաւար ուրուագծով հինաւուրց երևելի վանքը, շրջապատուած ամրապինդ շրջապատով։ Մութ գիշերային անդորրութեան մէջ, ուր զեփիւռի սլսլոցն անդամ չէր լսւում, այս սևին տուող ահագին մարմինը մի առանձին տպաւորութիւն էր գործում, որ սովորաբար մարդիկ անուանում են խորհրդաւոր։ Բացի ջերմեռանդութեան և ակամայ երկիւղի զգացմունքից, կայ նոյնպէս մի ուրիշ զգացմունք, որոնք միախառնուելով իրար հետ, այս տեսակ դէպքերում աղդում են մարդու հոգու վրայ։

Մենք ձիաներից իջած՝ կանգնած էինք պարապի փակուած դռան մօտ։ Մեր ամենքի վրայ լռութիւն էր տիրել։ Վեց հոգի էինք. երեք երիտասարդ ուսանող, մի վարդապետ, մի ուսուցիչ և ես։ Վերջապէս հայը սուրբն ընդհատեց մեր լռութիւնը՝ երեք անգամ զարկ տալով դռանը, որին ներսից յաջորդեց գամփռի հաչոցը։

—Ո՞վ էք, լսուեց անմիջապէս մի ձայն և մեզ-

նից պատասխան ստանալուց յետոյ բացուեց ծանր դուռը։ Վանահայրը սիրալիր ընդունեց և ունեցածը չխնայեց մեզ հիւրասիրելու համար անպաճոյճ սենեակում, աղօտ ճրագի տակ։ Պարզ և համեղ ընթրիքից յետոյ, վարդապետը հոգաց մեր անկողինների մասին և բարի գիշեր մաղթելուց զատ նաև խոստացաւ, համաձայն իմ խնդիրքի, զարթեցնել առաւօտեան ժամը չորսին՝ արևածագը տեսնելու համար։

*

Լուսադէմ է։ Ամենքս բարձրացել ենք վանքի զանգակատունը և հաղիւ տեղաւորուելով զանգակների տակ, սպասում ենք արևածագին։ Մթութեան բազմաթիւ լուսատուները ամբողջ գիշերը ուրախուրախ ժպտալուց ու շրջելուց յետոյ քուն են մտել։ Նրանցից միքանիսը դեռ էլի արթուն են, բայց գունատ ու դալկացած, հերթով մօտենում են իրանց վախճանին։ Անդնդային հեռաւորութեան մէջ հաղիւ է նշմարւում ահարկու ուրուականը։ Դա իր գլուխը հասցրել է երկնքին՝ պատառ-պատառ ու ցիրուցան անելով ամպերի դնդերը, որ իրան չխանգարեն, իսկ թևերը տարածել է լայնատարած երկրի վրայ, ուր թուում է թէ երկիւղածութեամբ հնազանդւում

է նրան բնութեան բոլոր հրաշալիքները և նրա հրամանի ներքոյ ամենայն ինչ ննջում է։ Կարծես աչ ու երկիւղ է կրում նրանից և՛ երկնային զօրութիւնը իր որոտումներով ու փայլակ-կայծակով, և երկրաշարժը իր բոլոր արհաւիրքներով։ Ասես թէ դա հսկում է ամբողջ տիեզերքի վրայ, դիտելով երկրագնդի բոլոր անկիւնները։ Այս կախարդական ուրուականը ծածկուած է թափանցիկ գոլորշուց հիւսած սաւանով։ Կաշկանդուած ու լարուած ուշադրութեամբ նայում եմ դէպի այդ կողմը։ Ենչառութիւնս համարեա դադարել է։ Երկնքի մոյգ-կապուտակը կամաց-կամաց բացւում է և միփոքր շառագունւում։ Ուրուականը աստիճանաբար, ամեն մի բոպէից յետոյ տեսանելի է դարձնում իր դէմքը և նրա հետ ներդաշնակաբար ամբողջ բնութիւնը սրամադրւում է կերպարանափոխւելու. սակայն լռութիւնն ու ամայութիւնը դեռ ևս մնում է անփոփոխ։ Երկիրն ամբողջապէս պատած է թանձր մշուշով, որի միջից հեռւում, շատ հեռւում մի ֆանտաստիկական էակ դուրս է ցցել իր սուր գլուխը՝ հսկայի երեսին նայելու, բայց ամօթխածութեամբ ցածից դէպի բարձր։ «Մեծ-Մասիս և Փոքր-Մասիս» կրկնում եմ միքանի անգամ մտքումս, «նոյ նահապետի տապանը չէր կարող սրան հաւասար մի ուրիշ ապաստարան

գոնել աշխարհում հանգիստ առնելու համար։ Աբրահամի գազաթի վրայից անշտապ կերպով վերանում է բարակ գոլորշին և ցնդում օդի մեջ։ Այդ միջոցին իջնում է նրա ճակատին հրաշէկ մի կայծ և զգուշությամբ ատամնում է։ Ամենքս զարմացած հայեացքներով նայում ենք միմեանց երեսին և չենք յանդգնում ձայն հանելու։ Տեսարանը հրաշալի է և խորհրդաւոր։ Վսեմ գագաթը կամաց-կամաց բորբոքւում է, բայց բորբոքւում է այնքան մեղմ, այնքան հրապուրիչ կերպով, որ չի կարելի երևակայել սրա նման զմայլեցուցիչ մի ուրիշ բան։ Այս երկնարժան տեսարանը մի բոպէի չափ է միմիայն տևում։ Կայծը սկսում է ընդարձակուել և ատիճանաբար գունատուելով ոսկեգծում է լեռան հպարտ ալեզարդ ճակատը և տեսանելի է դարձնում նրա հաղարաւոր կնճիռները։

Հինաւուրց ծերունին՝ որի դէմքի ծալքերը այս ատիճան մռայլ են, կարծես բազմաթիւ տխուր անցքերին վկայ լինելու պատճառով, երբեմն, շատ սակաւ, միմիայն լուսադէմին պատահում է իր մշտական զգեստը, բաց է անում աչքերը, նայում է իր շուրջը, նայում է ամբողջ աշխարհին և զմայլությամբ նորից ծածկւում անթափանցելի սև քողի տակ։

Սա է նրա ուրախ բոպէն։ Նա նախ և առաջ

նայում է գիմացի հարևանին, սպիտակահեր Արագածին և ողջույն տալու հետ միասին փայլեցնում է նրա քնաթաթախ դէմքը։ Ապա նայում է ցած և իր անբաժանելի յաւիտենական ընկերին արթնանալու հրաման է տալիս։ Այս տարօրինակ ժամին հեռուից զանգի մելամաղձոտ ձայնը տատանուելով տարածւում է օդի մէջ և անցնելով տափարակ դաշտի վրայով հանդչում մի անյայտ տեղ։ Արարատեան դաշտը քնից սթափւում է։ Երկնքից իջած նօսր գոլորշիները՝ գիշերային խաւարին մայր երկրի հետ դրկախառնուելուց ու արցունքներով թրջելուց յետոյ, շտապում են նորից երկինք բարձրանալ, սակայն ճանապարհին արևի ճառագայթներին հանդիպելով՝ շփոթւում են։ Զայրուելու համար պատառ-պատառ են լինում, խմբերի են բաժանւում և Մասիսի կուրծքի վրայ սողալով, նրա մօտ փրկութիւն են որոնում։ Լայնատարած հովիտը, որի համար կարծես դոյութիւն չունեն չափ ու սահման, ամփոփել է իր գրկում բազմաթիւ աւաններ ու գիւղեր, որոնց միջից կապոյտ ծուխեր են բարձրանում և յիշեցնում մարդկային ցեղի դոյութիւնը։ Ահա այստեղ, հեռու, ուր մթնոլորտն է տիրում, ուր մահկանացուի աչքը անզօր է սպիտակը սևից որոշելու, ուր ծերուկ Մասիսը սահման է դրել իր և տափարակ

երկրի մէջ, մի՞ նչ որ բան է նշմարւում ոսկեթելի նման, երևի այդ Արաքս գետն է...

Բայց երբ գաշտի երեսին փռուած վաղուց անցեալի յիշատակները, այդ մամռապատ, քարուքանդ եղած ճարտարապետական արտադրութիւնները նոյնպէս մառախուղից ազատւում են, ինձ թւում է թէ նրանք աղերսողի հայեացք են գցում վեհ ալեւորի վրայ, որից նրա սիրտը շարժւում է, սակայն կարծես իր վշտալի արցունքները չըցոյց տալու համար մօտ է բերում իր մշտական սգազգեստը և վարագուրւում է նրա տակ:

Տեսարանը փոխւում է: Այժմ ամեն բան նկատելի է դառնում, ամբողջ բնութիւնը կեանք է ստանում և գեղեցկանում:

Ինչ որ մի քանի բոպէ առաջ Մասիսի վսեմութեան երկիւղից կուչ էր եկած և չէր համարձակւում յիշեցնել իր գոյութիւնը, այժմ գլուխը բարձրացրած՝ պարծենում է իր ձևով ու գիրքով, շնորհքով ու տեսքով: Ահա աջ կողմ շարքով կանգնած են խոտի գնդաձև դէզեր, որոնցից մէկի տակը խեղճ գիւղացին փռել է իր սև եամինջին և խուրջինը գլխի տակ դրած ու ոտները ձգած՝ նստում է, իսկ նրա ձին դէպքից օգուտ քաղելով խրել է իր գլուխը դէզի մէջ և ուտում է ուրիշի սեփականու-

թիւնը։ Սկսած վերև երկնքի կապուտակութեան մէջ սեափեռուր մեծ թռչունը լայն թևերը տարածած լողալով շրջաններ է կազմում։

Սկսած ձախ կողմից երկու գիւղացի անասունները քշելով մեծ ճանապարհից շեղուած դաշտի միջով անցնում են և երբ մօտենում են սրբատեղին, գլխարկները վերցնում են ու ջերմեռանդութեամբ երեսները խաչակնքում։ Հեռում մի աւերակի մօտ մի բուռն կապոյտ ծուխ է դուրս ցայտում, որին հետևում է հրացանի ճայթումն։ Մեծ ճանապարհը՝ անկանոն գծով, վարուցանքով ծածկուած դաշտը ճեղքելով գլխիվայր գնում հեռանում է և մի ինչ որ աւանի մօտ իր հետքն կորցնում։ Մի տեղ, հէնց դաշտի մէջտեղում, Ս. Էջմիածնի արհեստական անտառը մշուշից ազատուած լինելով, արդէն պարզ երևում է։ Ընդարձակ հովիտը գոյնզգոյն շերտերով է ծածկուում։ Բլուրները յաջորդում են բլուրներին, գիւղերը՝ գիւղերին և այսպէս հեռանում են մինչև հորիզոնը և այնտեղ հանգչում...

*

Միևնոյն օրը մեր փոքրիկ խումբը գեղեցիկ տպաւորութեան տակ շարունակեց իր ճանապարհը։ Անցանք Աշտարակի, Օշականի, Բաշապարանի և էլի

շատ գիւղերի միջով, այցելեցինք Հառիճոյ վանքը և այսպէս հասանք Ալէքսանդրոպոլ։ Այնտեղ երկու օր առաջնորդարանում հիւրասիրուելուց յետոյ, ինքը յաջորդ հայր սուրբը, նոյնպէս մի քանի երիտասարդ միանալով մեզ հետ գնացինք Անի։ Կանգ եմ առնում այստեղ։ Դարձեալ շատ բան կայ խօսելու, սակայն թողնում եմ այս անգամ, յուսալով որ մի անգամ կրկին առիթ կունենամ պատմելու այս ճանապարհորդութեան շարունակութիւնը։

Խօսքս լրացնելու համար պէտք է աւելացնեմ, որ խոստմունքիս համաձայն Ախուրեան գետից մի շիշ ջուր վերցրի և հետս տարայ։ Երբ վերադարձայ Թիֆլիս, դիմաւորեց ինձ բարեկամս ու նրա առաջին խօսքն այս եղաւ. «Բերի՞ր ջուրը»։ Երբ իրան յանձնեցի արդէն հոտած ջուրը, անմիջապէս մօտեցրեց ամանը բերանին ու կուշտ խմեց, յետոյ մնացածը ածեց իր գլխին ու երեսին։ Նա այս գործողութիւնն այնպէս լուրջ կատարեց, ինչպէս մի սուրբ խորհուրդ և բարոյապէս վարձատրած աչքերով դիմեց ինձ.

—Շնորհակալ եմ։

Տեղս ուրիշը լինէր գուցէ չկարողանար ծիծաղը զսպել։

VII

Մենք գնում էինք Անի։ Այժմ մեր խումբը բաւական մեծացել էր, այնպէս որ ֆուրգօնում չտեղաւորուելու պատճառով մեզանից միքանիսը ձի էին նստել։ Ես տեղաւորուել եմ ֆուրգօնի ետևի մասում, ուր շատ անյարմար է, երկու կողմից էլ սեղմուած եմ։ Աջ կողմս նստած է ու ինձ վրայ յենուած հաստամարմին ընկերս, որին յաճախ բոթում եմ, յիշեցնելով, որ ինքը բաւական ծանր է։ Ի՞նչ անէ խեղճը, հակառակ իր ցանկութեան մռայլութեան մէջ է ընկնում, քանի որ խօսել սիրում է, երբ խօսակից ունի, իսկ այս անգամ վիճաբանութիւններից այնպիսի աղմուկ է տիրում ֆուրգօնի մէջ, որ խլանում են ականջները։ Ձախ կողմս դրած է փայտի մի կոպիտ արկղ, որի վրայ դրած է գինով լի տիկը, որ բոլոր ժամանակ շարժողութեան մէջ է։ Դիպչում է նոյնպէս ֆուրգօնի տախտակներին։ Նկատում եմ միւս ընկերիս, որ մի բոպէ կերկենայ իր տեղից, որովհետև իր ամբողջ ծանրութեամբ նստել է տիկս վրայ ու կատարելապէս թրմրեցրել։ «Անկարելի է վեր կենալ», պատասխանում է նա, երկու ոտներս էլ այս հայվանի տակն են։

1883 թ. ամառուայ ամենաշոգ օրերից մին է։ Մեզանից ամեն մէկը անդադար հովհարւում է իր գլխարկով, կամ թաշկինակով։ Կարօտել ենք ջրի, ծարաւը յաղթել է մեզ։ Խեղդւում ենք ոսթից, Ֆուրգօնի սպիտակ կտաւի ծածկոցը չի կարելի բարձրացնել, որովհետև այդ մի փոքր ազատում է մեզ արևի այրող ճառագայթներից։ Մեզ հետ միասին գնում են մեծ քանակութեամբ ճանճեր, որոնք խումբ-խումբ բաժանուած նստած են մեզանից մէկի գլխարկի, միւսի մէջքի վրայ և այլն։ Նրանցով շատ է զբաղուած մեզ հետ գնուող մի 14-15 տարեկան տղայ։ Մի երկու հարուած էլ ինձ է հասցնում ճանճեր բռնելու ժամանակ։ Մեր մէջ գտնւում են բաղդատարներ, որոնց նախանձում եմ ի սրտէ. նրանք քնած են հանգիստ կերպով և չեն արթնանում, մինչև անդամ երբ ճանճերը ճգնում են նրանց քթի ծակերը մտնելու։ Մօտենում ենք մի հայ գիւղի և նրա միջով անցնելիս կառքը կանգ է առնում։ Գոյնզգոյն շորերով կանայք շտապում են դէպի իրանց քարաշէն անշուք տնակները և ծածկւում անհամեստ աչքերից։ Նոյն տնակներից դուրս են վազում ոտաբոբիկ ու կիսամերկ երեխաներ ու շրջապատելով մեզ, հետաքրքրութեամբ նայում են մեզ վրայ ու ժպտալով խօսակցում միմեանց հետ։ Մերունի

գիւղացին, ջրի ամանը ձեռքին, արագ քայլերով մօտենում է մեզ և «Աստուած օգնական» ասելով, գնում է գետնին իր ահագին մորթէ գլխարկը, լցնում է ջրով պղնձէ թասն ու առաջարկում նախ մեր ճանապարհակից վարդապետներին և ապա հերթով մեզ, մեր հասակի համեմատ։ Ծուրգօնը նորից շարժւում է և դարձեալ շարունակւում է ընդհատուած ազմկալի վիճաբանութիւնը։ Անասունների խրխռոցը, գանգուակների ձայնն ու ձիերի ոռքի արոփիւնը ներդաշնակցում են նրան։ Ծաքացած փոշին դեղնագոյն գոլորշիով բարձրանում է ու շրջապատում մեզ։ Միայն ես եմ որ մասնակից չեմ վիճաբանութեանը, գլխացաւս բռնել է։ Փոքր առ փոքր մեղմանում է խրխռոցը և աւելի լսելի է դառնում խօսակցութիւնն ու աղմուկը։ Վերջապէս ձիերը կանգ են առնում և նրանց հետ ամենքն էլ լռում են։ «Գետին հասանք, Ախուրեանին մօտեցանք», լսելի է լինում միմեանց եռևից։ Չիավարը իջնում է, մօտենում է ձիերին և առանձին խնամատարութեամբ ու քնքշութեամբ ձեռք է քսում ճակատներին, ուղղում է բաշերը, սրբում է աչքերը ու ճարպիկութեամբ նորից բարձրանում նստում է իր տեղը, յետոյ վերցնում է իր գլխարկը, որ բոլոր ժամանակ ծուռ էր դրած ու երեք անգամ խաչակնքելուց յե-

տոյ, խրախուսում է ձիերին, տալով նրանց զանազան ածականներ ու զգուշութեամբ թողնում է նրանց դէպի գետը։ Ախուրեանը ընդարձակ դաշտի միջով անցնելիս, տարբեր պտոյտներով ու բազմատեսակ ճիւղաւորուած, կղզիներ ու թերակղզիներ գոյացնելով, անընդհատ միանում ու բաժանւում է։ Հոսանքը ոչ դանդաղ է և ոչ կատաղի, ձայնը ոչ ողբ է և ոչ սպառնալիք։ Ձիերը կամաց-կամաց մրտնում են ջրի մէջ ու ծածկւում կիսով չափ։ Գետը առ ժամանակ շփոթւում է, փրփուրն ու ալիքները ճնշում են իրար, որով և խանգարւում է հոսանքի միակերպ խաղաղ ձայնը։ Մենք անշտապ կերպով գնում ենք ջրի միջով, բայց որքան մօտենում ենք ափին, այնքան արագանում է ընթացքը։ Ձիավարը, որ վերջին մի երկու բոպէն յանձնել էր մեր ամենքիս վիճակը աղնիւ անասուններին, ափին հասնելուն պէս կարծես սթափւում է երկարատև թմրութիւնից։ Ցանկարծ շարժւում է տեղից, արտասանում է միքանի խօսք, որոնց մէջ զգացւում է և հայհոյանք, և փաղաքշանք։ Հարուածում է մտրակով աջ ու ձախ բոլորովին անտեղի, ասես թէ դրանով ցանկանում է ցոյց տալ մեզ իր շնորհն ու արհեստը երկիւղալի բոպէներում։ Նուտով դուրս ենք գալիս ջրի միջից։ Դարձեալ նորոգւում է ընդհատուած խառն խօսակ-

ցութիւնը, որից շատ քիչ բան է հասկացուում։ Դարձեալ տաքացած փոշին, արևի այրող ճառագայթները, աղմուկ, բայց Անին դեռ ևս չի երևում։ Աջ ու ձախ երևում են տափարակ դաշտեր, լեռնադաշտեր, բլուրներ, որոնց վրայ անկանոն կերպով ցիրուցան են արուած գիւղեր ու արտեր։ Քրանաթաթախ դէմքերով գիւղացիք մի տեղ հնձում են, միւս տեղ կալսում. իսկ մեծ մասամբ ցորենի հասկերը գլուխները թեքած սպասում են գերանդիին։

*

Արևը կամաց-կամաց թեքւում է դէպի երկիրը և իր տակ գտնուած լեռների վրայ բոցավառ կայծեր է մաղում։ Նա կարծես մեզանից հեռանում է և մենք այնքան այրուելուց յետոյ ազատուում ենք։ Այժմ մեր առաջ նկատելի է լինում հորիզոնաձև տարածուած մի պատ, որ բոպէ առ բոպէ մեծանում է և բարձրանում։ Մենք դիտում ենք այն պատը. այդ Անիի պարիսպն է։ Վիճաբանութիւններ ու դատողութիւններ միանգամից վերջանում են։ Զիավարին սխալում ենք որ «քշէ»։ Հիմա աւելի զգալի է նեղուածքը, մենք անհամբեր սպասում ենք ֆուրգոնից շուտով դուրս գալուն։ Դարձեալ միքանի բոպէ և մենք արդէն կամարաձև ընդարձակ մուտքով ան-

ցել ենք և պարսպի մեջն ենք գտնուում։ Բայց մենք միայնակ չենք։ Մեզանից մի փոքր առաջ հասել են Գէորգեան ձեմարանի աշակերտները իրանց տեսչի հետ։ Նրանք իրանց արևելեան ճաշակով գոյնզգոյն ներկած ֆուրգոնը մի կողմ թողած, կանգնել են մի աւերակի մօտ և խմբով երգում են «Մնի քաղաք նատեր կուլայ» երգը։ Ես երբէք այնպիսի անախորժ տպաւորութիւն չեմ ստացած, ինչպէս այս անգամ։ Բայց ոչ թէ նրանց երգն է անդուրեկան, բոլորովին ոչ։ Պատճառը երևի այն է, որ նրանց երիտասարդական աշխոյժ կազմուածքն ու հայեացքը, եռանդով լի երգի հետ միասին ներկայացնում է մի հակապատկեր այս շրջապատող աւերակների, ուր մշտընջենաւոր վայրենացած ամայութիւնն է տիրում։ Այդ տխուր երգը ոչ միայն չէ ներդաշնակում տարօրինակ տեսարանին, այլ վրդովում է նրա յաւիտենական հանգիստը, որ հաստատուել է դարերի ընթացքում։ Այս ընտիր ու հազւադիւտ ճարտարապետական յիշատակները, որոնք կենդանի մարդկանց արուեստով են կառուցուած, այժմ նոյնպիսի կենդանի մարդկանց գոյութիւնը խանգարում է նրանց անդորրութիւնը։ Հեռանում եմ ընկերներից ու ակամայ դգոյշ քայլերով անցնում գետնի մէջ թաղուած քարերի վրայով ու մօտենում մի մատու-

ոչ մնացորդին, որի միմիայն մի քառորդը դեռ էլի ամուր կանգնած է, իսկ երեք քառորդը այստեղ և եթ քարերի ու հողի մեքանի կոյտերի են փոխուել։ Սրանց միջից ստեպ-ստեպ դուրս են ցայտում խլէզներ, որոնք իրանց գոյնով չեն զանազանուում փլատակների գոյնից և մի ակնթարթում անցնում են քարից քար, կանգ առնում, չռում իրանց աչիկները ուղղակի դէպի մայր մանող արեգակը և դարձեալ յետ վազում թաքնուում։ Ո՞րքան յարմար գալիս է այս աննշան արարածների ներկայութիւնը անկենդան կուռակների հետ, ո՞րքան ներդաշնակութիւն...

Արևը մեծացած ու կարմրած հասել է հորիզոնին ու այնտեղ արևան ծով է կազմել։ Ամբողջ շրջակայքին մեղմութիւն է տիրել։ Աւերակների երկայն ստուերները տարածուել են անհարթ գետնի վրայ, ուր թռչկոտում են մորեխները և ուր սպիտակ ու կարմիր, կապոյտ ու դեղին թիթեռները անցնում են ծաղկից ծաղիկ։

Վանահօրը իր աղքատ բնակարանի հետ միասին անհանգիստ ենք արել։ Շատ պարզ երևում է, որ նրանք սովոր չեն այսպիսի մեծաքանակ անկոչ հիւրերի, որոնք անդադար մածուն են պահանջում։ Օրը մթնում է։ Մենք ամենքս հաւաքուում ենք վար-

դապետի բնակարանը։ Ամբողջ երեկոն պարելով, ծիծաղելով և ուտելով անցկացնելուց յետոյ, քնելու ենք պատրաստուում։ Մէկը փապաս է դռել ու փռել սենեակի յատակի վրայ, միւսը իր ետփունջու մէջն է փաթաթուել, երրորդը իր վերարկուի վրայ է դրել յոյսը և այսպէս ամենքս էլ պառկում ենք և անշուք միակ ճրագը հանդչում է։ Մի անկիւնից լսելի է լինում ծածուկ քշփշոց, որին հետևում է և զսպած ծիծաղ, միւս տեղ երևում են ծխախոտի կրակներ։ Աչ կողմից հաղիւ հասնում է ականջիս ջերմեռանդ աղօթք, այնտեղ պառկած են հայր-սուրբերը։ Դարձեալ մի քառորդ ժամ և սենեակում տիրում է խաղաղութիւն։ Արթուն եմ միմիայն ես։ Դիտաւորութիւն չունեմ քնելու, սպասում եմ կէս գիշերին։

*

Վեր եմ կենում տեղիցս, մեծ զգուշութեամբ բաց եմ անում սենեակի դուռը և դուրս գալիս։ Թնութեան մէջ տիրում է անթափանցելի խաւար, երկնքի երեսը ծածկուել է սև ամպերով։ Աչքս անզօր է բան տեսնելու, շուրջս տիրում է միակերպ սև տարածութիւն։ Երկինքն ու երկիր խառնուել են, իրարից չեն որոշուում։ Հասնում է ականջիս մի

խուլ սառբերկրեայ ձայն. դա իր մելամաղձոտ միակերպութեամբ ճնշում է սիրտս: Այդ Ախուրեանն է, որ ժայռոտ անդունդների միջով անցնելիս, այսպիսի դիշերներ անդամ չէ լռում: Ցանկարծ դուրս է պրծնում խաւարի միջից հրեղէն ժապաւէնը և վիրաւորուած օձի նման միքանի պտոյտներ անելուց յետոյ հանդչում է: Մի քանի վայրկեանից յետոյ լռում է հեռաւոր որոտումն և նորից ամենայն ինչ խաւարում է: Կանգնած եմ անշարժ ու անձայն և նայում եմ անվերջ սև քաոսի մէջ: Դարձեալ դուրս են ցայտում միմեանց ետևից հրաշէջ բոցերը, լուսաւորում են երկիրը և բոպէապէս հանդչում: Անապատելի կերպով սաստիկ քամին մռնչալով անցնում է մօտովս, իր հետ տանելով փոշի ու աւազ, խլում է դլխարկս ու անհետացնում: Քամին սատիմանաբար սաստկանում է, փչում է ամեն կողմից, պտոյտներ է անում, երբեմն շւացնում է, երբեմն մռնչում: Առժամանակ դադարելուց ու լռելուց յետոյ, մի ուժգին հարուածով դղրդւում է եթերը, աչք կուրացնող հրաբխային լոյսը տարածւում է երկրի վրայ, ոչնչացնում է մթութիւնը և տեսանելի դարձնում երկինքն ու երկիրը, մանաւանդ երկինքը, որտեղից լսւում է թնդանօթի խլացուցիչ ձայնը իր դաղտնալի արձագանքի հետ: Երկիրը շարժւում, դողում է

և կարծես երկիւղից կուչ գալիս։ Այս վայրկեանին բացւում է աչքիս առաջ մի անսովոր տեսարան, ահա այժմ միայն տեսնում եմ Անին։ Թնութեան այսպիսի խորհրդաւոր ճգնաժամին նա ցոյց է տալիս իր գոռոզ դէմքը, բոլորովին չքաշուելով մահկանացուներից արհամարհուած իր թշուառ վիճակից։ Այս կարճատև տեսարանը այնպիսի տպաւորութիւն գործեց վրաս և այնպէս թափանցեց ուղեղիս մէջ, որ անկարող եմ երբեւիցէ մոռանալ։

Ի՞նչ խրոխտութեամբ է բարձրացրել սիւնաձև ահագին աշտարակը իր գլուխը դէպի երկինք և դիտում իր շուրջը և ինչ տխուր կերպարանք է ընդունում, երբ նրա աչքին է ընկնում երբեմն իր նման կանգուն ու վսեմ, իսկ այժմ գլորուած ու փշրուած միւս աշտարակը։ Ահա աջ կողմը լայնատարած ու մէջքն ուռցրած միջնաբերդը, որի խնամքին են յանձնուած մատուռների ու զանազան շինութիւնների կմախքները և որի եռևում բացուած է ժայռոտ մութ անդունդը, ուր հոսում է տխուր անցեալի միակ կենդանի մնացած ականատես Սխուրեանը։ Ահա և ձախ կողմը աննման ստեղծագործութեան ուրուական-մայր-եկեղեցին։ Ինչպէս մարդկային գեղեցիկ մարմին, բայց գրկուած երբեմն պատկաղիր գլխից՝ խորշելու չափ սպանդակ է։ Նոյնպիսի

տպաւորութիւն է գործում և մայր-եկեղեցին։ Նա զրկուել է կաթուղիկէից, ամենագլխաւոր զարդից, որ առհասարակ տաճարի փառքն ու վսեմութիւնն է և որ երկիւղածութիւն ու Աստուածպաշտութիւն է ներշնչում հաւատացեալներին ու անհաւատներին։ Մայր-եկեղեցին, որի անունը սերունդից սերունդ-անցնելով ճնացել է անխախտ, կանգնած է վիրաւոր ու քայքայուած մարմնով և ցոյց է տալի գեղատեսիլ քանդակներ ու արձանագրութիւններ, իբրև միակ հետքեր անցած-գնացած անվերադառնալի պարծանքի։ Ահա՛ հեռւում ձորի գլխին նոյնպիսի խղճալի պատկեր. այնտեղ իրանց բարձրութիւնից վայր ընկած ու կործանուած են արքայական պալատները, որոնց նրբարուեստ պատերի մէջ երբեմն իշխողների խրոխտ ձայնը յաւիտենական քունն է մտել։ Դա նման չէ՛ ոչ տխուր գերեզմանին, ոչ հինաւուրց քարայրին, այլ այդ մի խղճալի ու վրդովեցուցիչ այլանդակ տեսարան է։ Սրանից մի փոքր դէնը, աշտարակից ոչ հեռու երևում է կաթողիկոսարանը։ Նրա փլատակների մեծ մասը տարածուած ու ցրիւ է եկած գետնի վրայ։ Ողջ է ճնացել միմիայն պատուանդանը, այն էլ անշուք ու անարուեստ։

Փայլակ փայլակի ետևից, կայծակ կայծակի ետե-

ւից չեն սպառւում և ես գտնւում եմ մի կախարդական աշխարհի մէջ, որ միևնոյն ժամանակ և տեսանելի է և անտանելի։ Երկնքի խռովութիւնը սաստկանում է ու սարսափեցնում երկիրը։ Ժամանակ առ ժամանակ ընդմիջւում է փոթորիկը և լսելի է լինում անվրդով Ամուրեանի միահնչիւն ձայնը։ Աչք եմ ածում շուրջս և զարձեալ նորանոր ուրուականներ են կարծես բուսնում երկրի միջից, եկեղեցիների, մատուռների, պալատների քարուքանդ եղած հետքեր, որոնք իրանց վաղեմի գոյութեան իբրև յիշատակ, չեն ցանկանում բոլորովին ջնջուել աշխարհի երեսից։ Փիչ հեռու տարածուել է ընդարձակ ու հոյակապ պարիսպը, որ դարերի ընթացքում նոյնպէս ենթարկուել է պատժի։ Նա՝ որ իր կոչման հանապատասխան պէտք է պահպանէր իրան խնամքին յանձնուած անգին հարստութիւններ, նա՝ որ պաշտպան պէտք է հանդիսանար երկիւղի և արհաւիրքի միջոցին, ինքը նոյնպէս կամ ուածահարի նման գրրկուելու է դժից։ Բայց օրքան արուեստ ու ճարտարութիւն, օրքան ռազմագիտական կանոններ են գործ դրած սրա կառուցման համար...

Ահա այնտեղ հեռաւոր բարձրաւանդակի վրայ, գետի միւս կողմում նշմարւում են զանազան շինուածքներ, բայց անկարող եմ որոշել նրանց ինչ

լինելը։ Նայում եմ դարձեալ շուրջս և տեսնում եմ անհարթ չոր գետնի վրայ մաշուած քարեր, մամռապատ կոյտեր և այս բոլորն իր միակերպութեամբ այնպիսի ձանձրացուցիչ է, ինչպէս անթիւ անգամ կրկնուած միևնոյն խօսքը։ Այս ընդհանուր տեսարանը ուզում եմ նմանեցնել վաղուց մոռացուած հինաւուրց գերեզմանոցին. բայց չէ՞ որ գերեզմանոցում գոնէ մահ է տիրում և կենդանի մարդուս վրայ ազդում է տխրութիւն ու ունայնութիւն։ Բայց սա չէ տխրեցնում, այլ մի տեսակ անբացատրելի վրդովմունք ու երկիւղ է յարուցանում մարդու սրտի մէջ։

«Այս է Անին», արտասանում եմ ես։

Փչում է նորից կատաղի քամին և աւազի հետ միասին բերում է նաև անձրևի կաթիլներ։ Օդը գոլորշիանում, անձրևը սաստկանում է և ես ստիպուած եմ վերադառնալ սենեակ։

VIII

Կովկասեան հսկայական լեռնաշղթայի ստորոտներին կից, աչքով անհասանելի երկայնութեամբ հարթ մակերևոյթը ծածկուած է կուսական անտառներով։ Այս անտառների բոլոր չորս սահմաններից երկուսը պարզ կարելի է որոշել Կախէթի զանազան բարձրաւանդակներից նայելիս։ Այդ սահմաններից մինը անվերջանալի լեռնաշղթան է, իսկ միւսը, նրա հակառակը ոլոր-մոլոր գծով հանդիսա հոսող Ալազան գետը։ Բայց միւս երկու իրար հանդիպակաց սահմանները ինձ չի աջողուել որոշել, թէև շատ եմ դիտել միքանի գլխաւոր բարձրութիւններից։ Ո՞րտեղ են հանդչում այդ երկու ծայրերը, ինձ յայտնի չէ։ Նրանք հեռաբրքիր աչքից այնպիսի խորհրդաւոր և գաղտնի կերպով են հեռանում ու դաշտային մառախուղների հետ գրկախառնուելով անհետանում, որ յանդգնութիւն եմ համարել իմ կողմից մարդկանցից իմանալու նրանց ինչ տեղ, ինչ գիւղի կամ աւանի մօտ լինելը։ Այս ընդարձակ անտառի մի որոշ մասը կոչւում է «Ճիաուրի անտառ»։

Մի անգամ, տարիներ առաջ, ինչ վիճակուեց դիշերն անցկացնել այդ անտառի մէջ։

Դեռ էլի մնում էր մօտ մի ժամ մինչև կէսօր, երբ ընկերիս հետ միասին կամուրջով անցանք Ալազան գետը—վրացի գիւղացիներից անպառուղ ու անպէտք համարուած Ալազանը։ Հասնելով գետի միւս ափը, իջանք ձիաներից ու մտանք դուքանը, ուր դիմաւորեց մեզ իմ վաղուցուայ ծանօթ Միխակը։

—Օ՜հ, բարով եկաք, համեցէք, քաղցած կը լինիք... չայ կուզէք... էհ, չայն ի՞նչ կանէք, արդէն ճաշի ժամանակ է. աչքերը արևի կողմ դարձնելով ասաց նա,—լաւ լօքօ ունեմ, դեռ էլի կենդանի է...

—Չայ չենք ուզում, շատ քաղցած ենք, բան պատրաստիր, ասացինք։

—Ներունակեցէք, տղերք. Դաթիկո, հերթը քոնն է, պատասխանիր թէ շնորհք ունես։

Դուքանի առաջ գտնուում էր վրացի գիւղացիների մի խումբ։ Նրանցից երկուսը, Դաթիկոն ու Գիոն վիճում էին, և ինչպէս վերջն իմացանք, նրանք սարբեր գիւղերից էին և երկուսն էլ յայտնի «չայրի» ասողներ էին։ «Չայրի» նշանակում է սարսափելի հայհոյանքներից ու յիշոցներից հիւսած (մեծ մասամբ) երկու նախադասութիւն, որոնք վերջանում են ոտանաւորի ձևով։

Եթէ «չայրի» ասողը վանկեր շփոթէ, կամ ոտը չբերէ, նա հանդիսականների կողմից ծաղրի

կենթարկուի և վէճի ժամանակ յաղթուած կը ճանաչուի։ «Նայրի» ասողը ձգտում է որ իր ասածը լինի սրամիտ, շնորհալի և միևնոյն ժամանակ համապատասխան իր հակառակորդի ասածին։

—Ներունակեցէք, Դաթիկո, Գիո, ահա սրանք էլ թող դատաւորներ լինեն, մեզ վրայ ցոյց տալով ասեց դուքանի տէր Միխակը,—թող սրանք որոշեն, թէ ով կը յաղթէ կամ կը յաղթուի։

Ցեռոյ դարձաւ մեր կողմը և փսփսաց մեր ականջին հայերէն. «գնա լսեցէք, երկուսն էլ հոչակուած են»։

—Թող լինեն դատաւոր, ես համաձայն եմ, ասաց Դաթիկոն և ուսերով մի տեսակ շարժուձև գործեց։

—Ինձ համար միևնոյն է, աւելացրեց անտարբեր կերպով Գիոն, թող սրանք լինեն արդարադատներ. եթէ յաղթուեմ էլ՝ ինձ նեբելի է, ծերացել եմ, յիշողութիւնս դաւաճանում է։

Այս ասելով նա նստեց ծալապատիկ, հանեց ոտի վրայից մաշուած տրեխը, միջից դուրս թափեց հողի փշրանք ու նորից հագաւ։

—Նստեցէք, տղերք, նստեցէք, ասաց հրամայական ձևով Միխակը, որ անշուշտ հեղինակութիւն էր վայելում ամբոխի աչքում։

Մի ակնթարթում բոլորեքեան, ժպիտները երեսին, նատեցին գետնի վրայ և լարեցին իրանց ուշադրութիւնը։ Ականջները կտրած հովուական սպիտակ Դամփոը մօտեցաւ կոտրած սայլից ընկած սառուերին ու միևնոյն տեղի վրայ մի երկու պտոյտ անելուց յետոյ պառկեց ու կարծես իսկոյն քնեց։

Տիրեց լռութիւն։

Դաթիկօն յօնքերը կիտեց, մի վայրկեան խորասուզուեց մտքերի մէջ ու համարձակ կերպով ուղղեց մի «շայրի» իր հակառակորդին։ Հանդիսականներից միքանիսը ժպտացին, իսկ մէկը բացականչեց «վա՜յ դէդաշէնս» (վա՜յ քո մօր)։

Գիօն անխռով դէմքով պատասխանեց զարմանալի ներդաշնակութեամբ, իսկ որ ամենագնահատելին էր, այնպէս ձևակերպեց իր «շայրին», որ ուղղակի ամօթալի համարեց Դաթիկօյի ասածը և նախատեց տգիտութեան համար, որ այդպիսի անշնորք բաներ չէ կարելի արտասանել պատուական հասարակութեան մէջ։

Մենք ամենքս հիացանք և չգիտեմ ինչու ամենքս էլ միաժամանակ շարժուեցինք մեր տեղերից։ Մի երիտասարդ, ըստ երևոյթին սայլապան, ուրախութիւնից վեր թռաւ տեղից, մի փոքր թռչկոտեց ու նորից նստեց իր տեղը։ Իսկ Միխակը եր-

կու ձեռքով ականջները ծածկեց ու՝ ՕՀ, ՕՀ ՕՀ բացականչելով ներս վազեց դուքան։ Սպիտակ Գամփռը բարձրացրեց գլուխը, նայեց այս ու այն կողմ և երբ տեսաւ, թէ այդ բանը իրան չի վերաբերում, նորից աչքերը խփեց ու քուն մտաւ։

Այս երկու հերոսները քառորդ ժամի չափ անընդհատ միմեանց հիւրասիրեցին զրչով աննկարագրելի յիշոցների կուտակներով։ Ընկերս՝ որ տեղացի չէր, շատ քիչ բան էր հասկանում այս բանից, իսկ ես մեծ ուշադրութեամբ հետևում էի գործի ընթացքին և ցաւում էի՝ հէնց սկզբից ներկայ չլինելուս համար։

Բոլոր ժամանակ աչքի էր ընկնում Գիօյի առաւելութիւնն ու գերազանցութիւնը։ Նրա ամեն մի «շայրին» ինքնուրոյն էր և ներդաշնակ։ Արտասանում էր ոգևորուած ու գիտակցաբար։ Իսկ Դաթիկօն անգիր էր արել զանազան ժամանակներում լսած շայրիներ։ Ոչ միներ իր սեփական մտքի ծնունդ չլինելով, դուրս էր տալիս մեքենայաբար։

Վէճի ամենատաք միջոցին Գիօն ուղղեց սովորականից դուրս մի ընդարձակ շայրի, որի մէջ յիշեց հակառակորդի թէ ծնողներին, թէ մօտիկ ու հեռու ազգականներին, թէ կնքահօրը, թէ սանահօրն ու սանամօրը, թէ ծանօթ ու հարևանին, թէ

նրանց մեռելների համար զազաղ շինողներին ու գերեզման փորողներին և այլ այլն։ Հանդիսականների մեծամասնության ուրախությունը գագաթնակետին հասավ։ Հակառակորդը իր համագիւղացիների հետ միասին միմիայն հեգնօրէն ժպտացին և սկսեցին հանդարտեցնել ամբոխը։ Դաթիկոն անմիջապէս պատասխանեց նոյնպէս ընդարձակ և բաւական լաւ շայրով, բայց իսկոյն բողոքեցին ամեն կողմից՝ «այդ արդէն ասացիր սկզբում... կրկնել չի կարելի» և այլն։ Դաթիկոն զայրութից կարմրած խրպոտ ձայնով իսկոյն արտասանեց մի ուրիշ շայրի և շտապով վերկացաւ տեղից։

—Այ մուրատաբ շուն—այ էշ, աւանակ... Տղերք, լսեցիք, կնոջ (Գիոյի ամուսնու) անուն յիշեց, լսուեց ամեն կողմից և իսկոյն շփոթն ընկաւ ամբոխի մէջ ու իրար խառնուեցին։ Սկսեցին միաժամանակ գոռալ, հայհոյել, նախատել, բայց պարզ բան չէր հասկացուում, թէ ով ինչ էր ուզում կամ ասում։ Վերջը բոլորեքեան երեսները դարձրին մեր կողմը և դատաստան խնդրեցին։ Թէպէտ խօսքերը չէին հասկացուում, բայց ձեւերից ու շարժուածքներից երեւում էր, որ հարցնում էին մեզ թէ արդեօք ունէ՞ր Դաթիկոն իրաւունք յիշել Գիոյի կնոջ անունը։ Ես վճիռս ուզեցի յայտնել, բայց դեռ մի հարց պէտք

է առաջարկէի, թէ արդեօք նրանք պայմանաւորուել էին վէճ սկսելուց առաջ կնոջ անուն յիշել կամ չյիշել։ (Այսպիսի դէպքերում շատ յաճախ պայմանաւորւում են)։ Երբ ես այս մտածմունքի մէջ էի, Դաթիկօն դուրս պրծաւ ամբոխի միջից ու սանձարձակ ձայնով բացագանչեց՝ «Թող կորչեն նրանք» և այլն։ Ահա նրա մեր հասցէին ուղղած բառերի ամենաքաղաքավարի թարգմանութիւնը։ Այս ասելով ձեռքով դաշոյնի կոթից ամուր բռնած հեռացաւ մեզանից։ Նրան հետևեցին չորս-հինգ հոգի, երեւի իր կողմնակիցներ, որոնք անընդհատ շուռ էին գալիս, հայհոյում էին մեզ ամենքիս ու գարձեալ շարունակում ճանապարհը, մինչև վերջապէս անհետացան։

Տխուր վախճանը ծանր ապաւորութիւն գործեց վրաս։ Շատ ցաւեցի Գիոյի համար։ Խեղճ Գիօն լուռ էր, միայն մի-մի անգամ ասում էր համեստ ու յոգնած ձայնով՝ «Լածիրակի հետ չպէտք է վէճի դուրս գայի»։

Վերջապէս ամեն ինչ հանդարտուեց և մենք նստեցինք ճաշի։ Ընկերս դուրս գնաց ու Գիոյի փէշից բռնած ներս բերեց մեզ մօտ, ուր նրա համար եռատանի կոպիտ աթոռ էինք պատրաստել։ Նա չուզեց նստել մեզ հետ, ընդունեց մեզանից միմիայն

մի բաժակ օղի ու փոքրիկ պատառ հաց ու շնորհակալութիւն յայտնելով՝ շարակեց ուսին իր հին խուրջինն ու գնաց։

*

Դեռ արևը մայր չէր մտած, երբ մօտեցանք ձիաւորի անտառին։ Բաւական ժամանակ ընթանալուց յետոյ իմ չափրած պօստի ճանապարհի վրայ վերջապէս փոխում ենք մեր ընթացքը և մի նեղ շաւղի միջով դիմում ենք դէպի անտառի խորքը։ Տեսակ-տեսակ թփերի փշոտ ճիւղերը արգելք են լինում մեզ հանդիստ ճնալ ձիու վրայ. երբեմն-երբեմն կարծես ընկնումենք հարիւրաւոր կատուների ճանկերի մէջ, որոնք անխնայ չանգրոտում են մեր մարմինը, փետտում դլխներիս մազերը ու պատռտում մեր ամառւայ շորերը։ Չնայած որ ձիերը տեղական են և սովոր են ամեն տեսակ սատանայական ճանապարհներով ման գալուն, սակայն նկատելի է նրանց տհաճութեամբ քայլելը։ Քայլում են դանդաղ ու անհաստատ և յայտնի չէ թէ ինչու են ամեն բոպէ կանգ առնում, նայում աջ, նայում ձախ, կարծես բան են որոնում ու դարձեալ շարունակում ճանապարհը։ Երբեմն ընկղմւում ենք խաւարի մէջ և մեր շուրջը տիրում է ճահճային գարշահոտութիւն, եր-

բեմն բացուում է մեր առաջ ֆանտաստիկական մի աշխարհ, ուր թափանցում են արևի ճառագայթ-ները, բայց ոչ թէ այն սովորական կերպով, ինչպէս միշտ տեսնում ենք։ Ո՛չ, սա ուրիշ լոյս է։ Անգութ արևի այրող ճառագայթները, անցնելով ծառերի բիւրաւոր ճիւղերի միջով ու հանդիպելով անթիւ ու անհաշիւ երփներանգ տերևներին՝ մեղմանում են, նուազում են և ապա ամենահեզիկ կերպով դրոշմում ծաղկալից մակերևոյթի վրայ շրջաններ ու կիսաշրջաններ, եռանկիւնիներ ու քառանկիւնիներ։ «Ի՞նչ կախարդական է այս տեսարանը», անցնում է մտքովս. ահա Արարչի ստեղծագործութեան ամենակատարեալը։ Ո՞վ կարող է արդեօք մտնել սրա գաղտնիքների մէջ, ո՞ւմն է մատչելի սրա լեզուն, ումի՞ն է բարձրից թոյլ տուած ըմբռնելու բնութեան հրաշալիքները և թարգման լինելու մեզ՝ հասարակ-մահկացուներիս։ Ո՞ւր ենք գնում մենք, ի՞նչ տեղ ենք գանւում, ո՞րտեղ է ճանապարհը, մի՞թէ կայ այստեղ ճանապարհ,—մենք չգիտենք։ Լայն ճանապարհների վրայ, ուր անընդհատ երթևեկութիւն կայ, ուր առանց մոլորուելու կարողանում ենք գնալ քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, մենք՝ ձիաւորներս սիրում ենք հարուածել մեր ազնիւ անասուններին ու ինքնահաւանութեամբ սանձից թափ տալ, սպառ-

նալ ու հայհոյել, իբր թէ նա մոլորուում է, շեղուում է ճանապարհից, իսկ այնպիսի հանգամանքներում, երբ ինքներս ենք մոլորուում՝ մեր ամբողջ յոյսը նոյն անասունների վրայ ենք դնում ու լիովին ապաւինում նրանց բնազդին։ Եւ այսպէս, այս բոպէիս մեր վիճակը մեր ձիերը պէտք է որոշեն և լիայոյս ենք, որ սրանք մեզ չեն կորցնի, այլ դուրս կը բերեն մեզ ցանկալի տեղ։ Անցնում են բոպէներ, փոխուում են տեսարաններն անընդհատ։ Ահա հաստամարմին ծերունի-կաղնին, ի՞նչ ամուր է կանգնել իր տեղը, ի՞նչ ազատօրէն է տարածել իր թուխ բազուկները, ինչ հոմանի է արել իր թևերի տակ և ինչ խնամքով է պահպանում հարիւրաւոր մատաղ ժառանգներին, անշուշտ թոռներին։ Ահա՛ նրանց մանկական ոտների տակ գևանատարած հանգչում է իրանց նահապետի քայքայուած մարմինը։ Ահա՛ նորից գեղեցիկ կանաչազարդ կիսամութ մի անկիւն, ուր երկու սիրահարների նման սղնին ու մասրին իրար վզով են փաթաթուել և այնպէս ամուր, որ կարծես երդուել են յաւիտեան չբաժանուել։ Ահա և նրանց փէշերի տակ մռայլ ճահիճ, անձռուոնի էակների—գորտերի բնակարան, ուրտեղից նրանք գաղտագողի դիտում են անմեղ սիրահարներին, երևի գիշերները բամբասելու համար իրանց անտանելի կռկռոցով։ Մենք

շարունակում ենք մեր ուղին։ Այժմս պատկերանում է մեր առաջ զանազան բոյսերից, մացառներից ու թփերից հիւսած խառնիճաղանճ մի անթափանցելի պատ, որի միջից անցնել չի յանդգնի նոյն իսկ անտառի բնակիչներից ոչ մի էակ։ Ցուսահատուած ձիս կանգնում է, աչքերը յետ է դարձնում, կարծես տեղեկանալու թէ միայնակ խօ չէ, յետոյ թափ է տալիս գլուխը ու հանդարտ քայլերով դիմում դէպի աջ, բաց է անում տերևախիտ թփերը ու ոտի տակ տալով ամենայն ինչ՝ գնում է առաջ։ Մի բոպէից յետոյ զգում եմ թէ ինչպէս փոքր առ փոքր իջնում եմ կարծես անդունդ։ Աչքերս փակում եմ, որովհետև անդադար ապտակներ են զարնում երեսիս։ Ձիս մի վայրկեան կանգ է առնում, կուչ է գալիս և յանկարծ անսպասելի կերպով թռիչք է անում։ Եթէ ես ձի նստել սովոր չլինէի, անշուշտ պէտք է վայր ընկնէի։ Ընկերս որ հետևում է ինձ՝ ենթարկւում է միևնոյն վիճակին, բայց նա փոքր ինչ ինձանից բաղդաւոր է այն պատճառով, որ ես վաղօրօք զգուշացնում եմ նրան։ Ենթադրում եմ, որ ձիս փոսի վրայից թռաւ։ Հիմա աստիճանաբար բարձրանում եմ, բայց դարձեալ նոյն տեսակ թփերի մէջն եմ գտնւում։

*

—Ես բոլորովին կուրացայ, աղաղակում է ընկերս,—ո՞ւր ենք գնում արդեօք, մենք մոլորուել ենք... Սա ճանապարհորդութիւն չէ, սա տանջանք է...

Օ՜հ, փառք Աստուծուն, հիմա մի փոքր ազատ կարող ենք շունչ քաշել, աչքերս էլ կարող ենք բաց պահել։ Մենք մտել ենք անտառի իսկական խորքը։ Հսկայական ծառեր մէկը միւսից դերազանց, միմեանցից շշուփելի հեռաւորութեան վրայ կանգնած են անշարժ։ Նրանց դարևոր, սևացած բունները ծածկուել են դիւրեկան կանաչ գոյնի մամուռներով։ Մենք գնում ենք տարօրինակ կամարների տակ, ուր արևի լոյսը համարեա բոլորովին չէ թափանցում։ Մեր շուրջը տիրում է աղջամուղջ։ Շնչառութիւնս ծանրացել է, կրծքիցս հաց է առաջանում։ Իջնում ենք ձիերից՝ նրանց փոքր ինչ հանգիստ տալու համար, և դարձեալ շարունակում ճանապարհը։ Ոտներիս տակ ինչ որ փափկութիւն եմ զգում, կարծես մահիճներ լինեն փռուած։ Ամբողջ մակերեսոյթը ծածկուած է միակերպ մռայլ գոյնով, որտեղից խոնաւութեան հետ միասին դարշելի հոտ է բուրում։ Սա անբացատրելի չէ։ Անյիշելի ժամանակներից սկսած իւրաքանչիւր տարի, ձմեռը մօտենալուն պէս, ծառերը տերևաթափ են լինում ու փտում և այս տերևների կուտակներից կազմւում է

փափուկ մակերևույթ, որի վրայով այս բոպէիս անց ենք կենում։ Չկայ բոյսի նշան ոչ մի տեղ, մեռելութիւն է տիրում։ Մեզ վրայ յարձակուել են մեծ քանակութեամբ քաղցած մոծակներ և անխղճօրէն ծծում են մեր արիւնը։

Մեր դրութիւնը արդէն անտանելի է դառնում։ Ո՞ր կողմ պէտք է գնանք, ինքներս էլ չգիտենք։ Արդեօք որևիցէ ժամանակ եղել է այստեղ կենդանի արարած։ «Գնանք աջ, գնանք ձախ. այդ միևնոյն է, միայն թէ գնանք հեռանանք այստեղից», կրկնում ենք անդադար։ Եւ այսպէս դարձեալ շարունակում ենք ճանապարհը դէպի աջ կողմ։ Մի քանի բոպէից յետոյ միանգամայն ազատուում ենք այդ «մռայլ աշխարհից» և դուրս ենք գալի մի կանաչազարդ հրապարակ, ուր այստեղ ու այնտեղ վայրի խաղողի որթերը, իրանց օձապտոյտ բուներով բարձրացել են ու կաշկանդել կողքին կանգնած մատուցահաս ծառերը։ Հրապարակի մէջտեղ լուռ ու անձայն հոսում է փոքրիկ առուակ։ Լոյսը պայծառ է և օդը մաքուր, սակայն մի-մի անգամ անախորժ հոտ է բուրում։ Անցնում ենք առուակի վրայից և դիմում ենք դէպի առաջ։ Այստեղ մեր առաջ մի կանաչազարդ թփի տակից աղմուկ ու շփոթ գցելով բարձրանում է դիշակեր թռչունների մի երամ։ Ակամայ դիտում

եմ այնտեղ և տեսնում եմ մի տխուր տեսարան։ Թփի վրայ թելերով կապած արդէն մաշուած մի կտոր թղթի վրայ երևում է երկտող գրութիւն (վրացերէն). «Ես որսորդ Դ... Ս... անզգուշութեամբ սպանեցի իմ հաւատարիմ Սատաւարին» (շան անուն)։ Նոյն թփի տակ խոտերի միջից երևում է կմախք դարձած «Սատաւարի» գիակը։ Վերջապէս այստեղ երևում են ոտի տակ տուած ու տրորուած տեղեր, իսկ միքանի քայլ հեռու պարզ երևում է հարթած նեղ շաւիղ։ Այդ շաւղով առաջանում ենք ուրախացած, որ չենք մոլորուել, բայց մերթ ընդհատուում, անցայտանում է և մեզ դցում յուսահատութեան մէջ։

—Չի նատենք, ասում է ընկերս, — սրանք մեզանից լաւ կարող են գտնել հետքերը։

Ես համաձայնուում եմ։ Նստում ենք ձիերի վրայ և բաց թողնում սանձերը։ Ձիս շուտով որոշում է ճանապարհը և գնում է առաջ, դիպցնելով ինձ աջ ու ձախ ծառերին։ Ծառերն ու թփերը շուտով վերջանում են և մենք դուրս ենք գալի մի բաւական ընդարձակ ճահճային մակերևոյթի վրայ։ Ցեխ ու պղտոր ջուր, ուրիշ բան չկայ։ Միանգամից տիրում է սրտիս յուսահատութիւն։ Ձիս կանգ է առնում։ Ընկերս նոյնպէս հասնում է ու հառաչում։ «Այ քեզ խայտառակութիւն, ո՞րտեղ բերիր դու

ինձ», նախատում է ինձ լայի ձայնով։ Ես ինձ մեղավոր ճանաչելով լռում եմ։ Զգիտեմ ինչու, սարսռում եմ ձիուս մանել ցեխերի մեջ։ Խեղճ անասունը հնազանդվում է, մտնում ու թաղվում է մինչև ծունկները։ Քիթը ուռցրած նայում է շուրջը և ոտները դժվարությամբ հանելով՝ դառնում է յուր և քայլերը արագացնելով դիմում է դեպի ձախ։

—Ուզում էիր կենդանի թաղվե՞ր, ծաղրելով հարցնում է ինձ ընկերս։

Ես լռում եմ։ Անդիտակցաբար մտրակում եմ ու սանձահարում ձիուս։ Սա վազում է և հինգ րոպեից յուրայ հասնում ենք մի գեղատեսիլ անկիւն, ուր երեք հատ վիթխարի կաղնիներ, երեք հատ խրարից գերազանց գեղեցկուհիների նման հրաշալի խումբ են կազմել։ Դրանք կանգնած են մի սիրուն կանաչազարդ հրապարակի վրայ և այս բոլորաձև հրապարակը շրջապատուած է ազարթախիտ անտառներով, ուղղակի պարապի նման։ Արեգակը արդէն մայր է մտնում և իր վերջին ծիրանի ճառագայթներով ներկել է ամենարարձր ծառերի գագաթները։ Մենք մօտենում ենք երեք կաղնիներին և առանց միմեանց խօսք ասելու, համարեա միաժամանակ իջնում ենք ձիերից, կարծես վաղօրօք վրձռած լինէինք անպատճառ այսանց գիշերելու։ Կա-

պում ենք ձիերին գետնից դուրս պրծած ծառերի արմատներից, փռում ենք կանաչ խոտերի վրայ մեր վերարկուները և գլուխներս դնելով խուրջինի վրայ՝ ձգում պառկում ենք։ Փոքր ժամանակ թմրած լինելուց յետոյ սթափւում եմ և մեծ դժուարութեամբ բարձրանում տեղիցս։ Մարմինս, մանաւանդ ոտներս սաստիկ ծանրացել են, քայլերս հազիւ եմ փոխում։ Ընկերս քուն է մտել։ Մեր շուրջը տիրել է աղջամուղջ. բնութիւնը ընկղմուել է կիսախաւարի մէջ, ոչ լոյս է և ոչ մութ։ Ամէն տեղ տիրում է տխրութիւն։ Ցխուր է և իմ սիրտս։ Մարդու հոգին չի դիմանում անորոշ դրութեան։ Զարթեցնում եմ ընկերիս անոյշ քնից և սկսում ենք հաւաքել վառելիք, որովհետև հարկաւոր է մեզ խարոյկ ամրողջ գիշերը մինչև լուսաբաց։ Երկիւղալի է առանց կրակի մնալ այսպիսի անտառում, ուր ինչպէս լսած եմ, գազանների թիւը մեծ է։ Ընկերս երկար լռութիւնից յետոյ սկսում է պատմել տխուր բաներ, յիշում է իւր հանգուցեալ մօր վերջին կտակը և յանդիմանում է ինքն իրան, որ սրբութեամբ չի կատարել։ Ցիշում է նոյնպէս իր տեսած խառնիխուռն տխուր երազները։ Բռնում է ձեռքս ու էլ բաց չէ թողնում։ Նկատում եմ որ սրան երկիւղ է տիրում, թէպէտ աշխատում է ինձանից ծածկել։

Խեղճ երիտասարդը առաջին անգամն է փորձում բնության գրկում գիշեր անցկացնել։ Կրակ ենք տալիս չորացած ծառի ճիւղերին և անմիջապէս սառուցեալ ծուխ է բարձրանում։ Սրան հետևում է վերև ծառերի տերևների մէջ իրարանցում։ Մենք օտարներս անհանգիստ ենք անում տեղական բնակիչներին— անմեղ թռչուններին։ Գիշերն իր սև քօղը ծածկել է ամբողջ աշխարհիս վրայ։ Խարոյկը ուժգին բորբոքւում է և իր շուրջը կարմիր լոյս տարածում։ Ընկերիս զէմքը ուրախութիւն է արտայայտում, լոյսը ոգևորել է նրան։ Սրախօսութիւններ է անում, անեկդոտներ պատմում ու ծիծաղում։ Ուրախ եմ նոյնպէս և ես։ Ցանկարծ գաղանիքի նման բացւում է, որ մենք քաղցած ենք և միմեանց խորհուրդ ենք տալիս անպատճառ ընթրել։ Հանում ենք խուրջինի միջից մեր համեստ ընթրիքը, նստում ենք խարոյկի մօտ և մեծ ախորժակով ուտում։ Մի շիշ կարմիր գինի ունենք, որ մեզ բոլորովին բաւական է լինում։ Ինչ սանձարձակ ու անխոհեմ կենցաղներ ենք առաջարկում... սա կը տաղի միմիայն անտառի խորքում և անպատճառ գիշերուայ ժամին։ Մեր ծիծաղն ու ուրախութիւնը վերջանում է գինու հետ միասին։ Քնելու ժամանակն էլ արդէն հասել է, բայց հերթով պէտք է քնել։ Այս գիշեր հարկաւոր է մի արթուն

պահապան։ Վճռում ենք, որ մինչև ժամի երկուսը ընկերս քնի, իսկ այնուհետև ես։

Նա պատկերն ինչպես քուն է մտնում։ Խարույկին աչքայնում եմ հասա փայտեր, որպէսզի երկար ժամանակ դիմանայ կրակը, իսկ ես անց ու դարձ եմ անում մեր հիւրընկալ կաղնիների տակ։ Բնութիւնը՝ սևերով զգեստաւորուած, անվրդով ննջել է։ Տեսարանը մռայլ է ու անթափանցելի։ Նայում եմ շուրջս և ամեն տեղ սև տարածութիւն եմ տեսնում, իսկ այդ սև տարածութեան մէջ նաև սև ուրուականներ, որոնք անշարժ կանգնած հանդիսատ են տանում։ Զեփիւռի նշան չկայ, երևի նա էլ է քուն մտել։ Արթուն են միայն նման ձիերը և անդորրութեան մէջ արածում են։ Արթուն են նոյնպէս անհանգիստ ծղրիտները, որոնք խաւարի մէջ ծածկուած փսփսում են իրար հետ։ Արթուն է նոյնպէս և Պատանը։ Նրա հեռաւոր խուլ հառաչանքը տարածւում է բնութեան մէջ։ Ինչու է արդեօք ցերեկով մեռած, անձայն, իսկ գիշերները ողբում։ Մութ կապոյտ երկնակամարի վրայ խումբ-խումբ շարուել են շարժուն ու անշարժ, մեծ ու պստիկ աստղամանդներ և անմեղ ժպիտ երեսներին արծաթեայ փոշի են դուրս փչում։ Դրանք դեռ երկար կրդուարձանան մինչև իրանց թագուհու երևալը։ Աշխատում եմ որ-

քան կարելի է քայլերիս ձայնը անպակի զարձնել, բնութեան արբազան ներդաշնակութիւնը չխանգարելու համար, սակայն իզուր... Մենք այսպես աւերող մաս ենք կազմում։ Խարոյկը ժերթ բորբոքում, կատաղում է, ժերթ նուազում և իր անհաւասար լոյսը խաղացնում է իր շուրջը։ Երկու կոր մոխրագոյն սնպեր համեստութեամբ լռութեամբ երբեմն մօտենում են իրար ու հաճրուրում, երբեմն ձանձրանում իրարից ու բաժանւում և այսպէս հանդարտ անցնում են երկնակամարի վրայով։ Օդը սառնաձանաբար խոնաւ ու անդիւրեկան է դառնում։ Տրամադրութիւնս փոխւում է, ձանձրանում եմ, քունս յաղթում է, բայց չյաղթուելու համար նստում եմ խարոյկի մօտ ու քնած ընկերիս գէմքի գծագրութիւնը դիտում։ Փոչում են բոպէները բոպէների հետից, սակայն խաւարի միակերպութեան մէջ ոչ մի փոփոխութիւն չէ նկատւում։ Ցանկանում եմ ի սրտէ, որ ընկերս արթնանայ։ Բազդի բերմամբ ձիերի մէջ շփոթ է առաջանում, սկսում են խրխինջալ ու յարձակուել միմեանց վրայ, Ընկերս քնաթաթախ վեր է թռչում տեղից, ապուշի նման նայում է վրաս ու անհասկանալի բառեր արտասանում։ Նուազով ուշքի է գալիս, նայում է ժամացոյցին ու առաջարկում է թնձ քնել։

Միքանի բոպէից յետոյ քուն եմ մտնում և որքան ժամանակ է տևում այս դրութիւնս՝ չգիտեմ։ Երազի նման անորոշ կերպով զգում եմ ինչպէս մարմնիս միջով անցնում է և թունդ տաքութիւն, և թունդ սառնութիւն։ Այս անհանգիստ դրութեան մէջ մի ինչ-որ ախորժաբուր ձայներ են հասնում ականջիս։ Ո՞րտեղից են այս ձայները, անկարող է միտքս ինձ հաշիւ տալ։ Թմրած դրութիւնս կամաց-կամաց բացւում է և ես սկսում եմ գիտակցօրէն լսել երգի ձայնը։ Եղանակը թէպէտ քաղցր, բայց ախուր ու սրտամաշ է։ Անշուշտ անյաջող սիրահարութիւնից տանջուած տխրական մի երաժշտի արտադրութիւն է։ Երգի բառերը անկարող եմ ճշգրտութեամբ որոշել, բայց ինձ թւում է, որ յուսահատ հայ բանաստեղծի բորբոքուած սրտից դուրս հոսած ողբալի երգ է, որ ինձ յայտնի է.

Քնե՞զ ողբամ, ով կոյս, որ սրտիդ խորքում
Թաղցնում ես սէրդ անթիւ չարչարից,
Որ չարչարում ես մութ անկիւններում,
Որ լաց ես լինում ծածուկ ամենից,
Որ հազիւ երբեմն ահով, երկիւղով
Ցալիս ես համբոյր սիրած աչերիդ,
Որ ոչ այժմ ունիս օրեր անվրդով
Եւ ոչ ապագայ մօտիկ առաջիդ։

Օ՜, ինչ հրաշալի ներդաշնակություն եղանակի և բառերի մեջ։ Երևի ինքը, անբաղդ սիրահարը—բանաստեղծն էլ այս տեսակ է երգել. տխրած հոգով տխուր ժամերին։ Իսկ ես այս բոպէիս մոռացության մեջ ընկղմուած ու շունչս պահած ուզում եմ անվերջ լսել այս դիւթական ձայները։ Երգը շարունակում է զեղգեղել և տատանուելով մաքուր օդի մեջ, նուազում՝ մարում է.

Ի՞նձ ողբում ես, կոյս, որ թոյլ ու անզօր
Զեմ փրկում քեզի այդ դառն կեանքից,
Թէպէտ պատառում է սիրտս ամեն օր,
Թէև այրում է ինձ ցաւ ու կսկիծ։
Ես էլ քեզ նման, իրրև մի յանցանք
Թաղում եմ իմ մէջ զգացմունք սրտիս.
Ես էլ ոչ հիմա ունեմ խաղաղ կեանք
Եւ ոչ ապագայ մտիկ առաջիս։

Երգը ընդհատուում է։ Ընդհատուում է և իմ կախարդուած դրութիւնս։ Սպասում եմ երգի շարունակութեան։ Բաց իզուր։ Բաց եմ անում աչքերս և նայում եմ երկնքին, ուր մութ կապուտակութեան մեջ մաշուած լուսինն իր սուր եղջիւրներով փայլում է և իր համեստ շողերը տարածում ազատ բնութեան մեջ։ Նրա շուրջ եղած աստղերը չքացել

անցյալտարի էին։ Խաւարը վերացել է երկրի վրայից՝ տեղ տալով բարակ մշուշին։ Սառն զեփիւռը օդի մէջ խաղալով քերում է երեսս։ Մարմինս սառել է և շրջելս թրջուել։ Անտառի միջից լսւում է մեզմ սլաց։ Վեր եմ կենում տեղիցս ու նստում խարոյկի մօտ տաքանալու։ Ընկերս նոյնպէս մօտենում է ու նստում կողքիս, առանց խօսք ասելու, բայց ինձ թւում է, որ ծածկում է ինձանից արտասախառն աչքերը։ Անբաղդ երիտասարդ, անշուշտ շատ է յուզուել նրա սիրտը երդելիս։ Դրա կեանքն էլ լի է անցաւոր սիրահարական արկածներով։

Լուսինը կամաց-կամաց դալկանում է, աստղերը իրար եռևից հանդչում են, երկնքի կապուտակը պարզւում է և ամեն կողմից լսւում է թռչունների ծլվլոց։ Ամբողջ բնութիւնն արթնանում է քնից, իսկ միակ Ալազանը նոր է քուն մտնում, լռում։

—Գնանք, շարունակենք մեր ճանապարհը, արդէն բացւում է ազօթարանը։

—Այո, գնանք, ժամանակ է, պատասխան է լինում իմ կողմից։



8r
A I/25

Սիրելի ընթերցող.

Կան անաբոյծ վարպետներ, որոնք չունենալով անհրաժեշտ գործիքներ՝ հասարակ դանակով են շինում զանազան մանր—մունր իրեր։ Այդ իրերը բնականաբար մեծ բան չեն լինում, սակայն պէտք են դալիս տան մէջ։ Այնպէս էլ գրքոյկս. թէև գրած է շատ աղքատ ու տհաս հայերէն լեզուով, յամենայն դէպս աւելորդ չպէտք է համարել մեր ոչ հարուստ գրադարանի համար։

Բայց եթէ դու «Ցիշողութիւններս» կարդացիր առանց ձանձրանալու, այդ ինձ համար մեծ վարձատրութիւն է։

Գ. Բ.